ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

E

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Distr.
GENERAL

ECE/MP.PP/2005/18/Add.1

ARMENIAN
Original: ENGLISH

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Սույն զեկույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կողմից (Կոնվենցիան ստորագրած Կողմի կամ Պետության անվանումը) I/8 և II/10 որոշումների համաձայն

Ազգային զեկույցը ներկայացնելու համար պատասխանատու պաշտոնյայի անուն ազգանունը	**Աիդա Իսկոյան ՀՀ-ում Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող**
Ստորագրություն	
Ամսաթիվ	**06.12.2013**

Օրհուսի Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ IV ազգային զեկույց

Ներկայացրեք հետևյալ տեղեկատվությունը զեկույցի վերաբերյալ

GE.05-31186 (R) 250505 310505

Կողմ	Հայաստանի Հանրապետություն
Ազգային համակարգող	**Աիդա Իսկոյան**
Հաստատության լրիվ անվանումը	ՀՀ բնապահպանության նախարարություն
Պաշտոնյայի անուն ազգանունը և պաշտոնը	Աիդա Իսկոյան Հայաստանի Հանրապետությունում Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող
Հասցե	ՀՀ, ք.Երևան, 0010, Կառավարական 3-րդ տուն,
Հեռախոս	(+374) 10 585369 (+374) 91 420021 (+374) 10 559602
Ֆաքս	(+374) 10 540857
Էլ. փոստ	min_ecology@mnp.am, aidaisk@arminco.com
Ազգային զեկույցի համար պատասխանատու պաշտոնյա (եթե տարբեր է)	
Հաստատության լրիվ անվանումը	
Պաշտոնյայի անուն ազգանունը և պաշտոնը	
Հասցե	
Հեռախոս	
Ֆաքս	
Էլ. փոստ	

I. ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ներկայացրեք հակիրճ տեղեկատվություն զեկույցի պատրաստման գործընթացի վերաբերյալ, ներառյալ այն, թե որ պետական մարմինների հետ եք խորհրդակցություններ անցկացրել կամ որ պետական մարմիններն են ներդրում ունեցել զեկույցի պատրաստման գործում, ինչպես են անցկացվել հասարակայնության հետ խորհրդակցությունները և ինչ կերպ են հաշվի առնվել հասարակական խորհրդակցությունների արդյունքները և ինչ նյութեր են օգտագործվել՝ որպես զեկույցի պատրաստման հիմք։

Պատասխան՝ Հայաստանում Ազգային զեկույցի պատրաստմանը մասնակցել են Օրհուսի Կոնվենցիայի (ՕԿ) համակարգողը, ՀՀ Բնապահպանության նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ առողջապահության

նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, քաղաքապետարանի և մարզպետարանների, ՀՀ Ազգային Ժողովի ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանում գործող էկոլոգիական տեղեկատվության հասարակական կենտրոնների (այսուհետ՝ Օրհուս կենտրոն) համակարգողներ, ոչ կառավարական կազմակերպությունները (այսուհետ՝ ՈԿԿ), գիտության և գործարար ոլորտի ներկայացուցիչներ: Սույն զեկույցի իմաստով ՈԿԿ-ը հավաքական հասկացություն է, որն իր մեջ ներառում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր ոչ առևտրային կազմակերպությունները:

2013 թվականի մայիսի 29-ին ՀՀ-ում Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող Ա.Իսկոյանը համապատասխան տեղեկատվություն է ուղարկել բնապահպանության ոլորտի պետական կառավարման մարմիններին և ՈԿԿ-ներին՝ Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացման 4-րդ ազգային զեկույցի մշակման գործընթացի մեկնարկի մասին և հրավիրել բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնելու զեկույցի վերաբերյալ իրենց նկատառումներն ու առաջարկները: ՀՀ բնապահպանության նախարարությունը Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացման 4-րդ ազգային զեկույցի մշակման գործընթացի վերաբերյալ հայտարարությունը՝ համապատասխան նյութերի հետ միասին ուղարկել է ՀՀ բոլոր նախարարությունների և գերատեսչություններին վերջիններիս առաջարկները և դիտողությունները ստանալու համար:

2013 թվականի հունիսի 12-ին Երևանի Օրհուս կենտրոնում կայացավ Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողի և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության մասնագետների հանդիպումը ՈԿԿ-ների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վերջիններիս ներկայացվեց ազգային զեկույցի կառուցվածքը և բովանդակությունը, տրվեցին անհրաժեշտ ցուցումներ: Մասնակիցները հնարավորություն ունեցան արտահայտելու իրենց դիրքորոշումը զեկույցի առանցքային հարցադրումների վերաբերյալ, որոնք այնուհետև գրավոր ձևակերպվեցին վերջիններիս կողմից ներկայացված առաջարկներում:

2013 թվականի հոկտեմբերի 21-ին Երևանի Օրհուս կենտրոնում պետական մարմինների, ՈԿԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կայացավ ազգային զեկույցի նախագծի երկրորդ քննարկումը, որի ընթացքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում նախագիծն արժանացավ մասնակիցների դրական գնահատականին: Մասնակիցների կողմից արվեցին մի շարք առաջարկներ զեկույցի տեքստը լրացնելու վերաբերյալ:

Պետական մարմինների, ՈԿԿ-ների և քննարկման մյուս մասնակիցների առաջարկությունները գրավոր և էլեկտրոնային ձևով

ուղարկվել են Օրհուսի Կոնվենցիայի համակարգողին, որոնց զգալի մասը քննարկումից հետո ընդգրկվել է զեկույցի տեքստում: Որոշ նկատառումներ համապատասխան հիմնավորմամբ չեն ընդգրկվել զեկույցում կամ ընդգրկվել են մասնակիորեն:

2013 թվականի նոյեմբերի 14-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում պետական մարմինների, Օրհուս կենտրոնների համակարգողների և ՈԿԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացման 4-րդ ազգային զեկույցի նախագծի վերջնական քննարկումը, որի ընթացքում ներկայացվեցին տեքստում կատարված հիմնական լրացումները և փոփոխությունները: Զեկույցի տեքստը արժանացավ մասնակիցների հավանությանը:

Զեկույցի նախապատրաստման համար օգտագործվել են ՀՀ օրենսդրությունը, նախարարությունների, տարածաշրջանային էկոլոգիական կազմակերպությունների և ՈԿԿ-ների հրատարակությունները, Օրհուսի կոնվենցիայի իրականացման ուղեցույցը, և պրակտիկ նյութեր: Բացի այդ, նախորդ զեկույցից դուրս է բերվել հնացած տեղեկատվությունը: Զեկույցում արտացոլված են ՀՀ օրենսդրության բոլոր փոփոխությունները՝ կապված կոնվենցիայի դրույթների իրացման հետ:

II. ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեղեկացրեք ցանկացած հատուկ հանգամանքների մասին, որոնք կարևոր են զեկույցը հասկանալու համար, օրինակ՝ գործում է արդյոք որոշումների ընդունման ֆեդերալ կամ ապակենտրոնացված մեխանիզմ, ենթակա են արդյոք Կոնվենցիայի դրույթներն անմիջական կիրառման Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից, և արդյոք սուղ ֆինանսական միջոցները էական խոչընդոտ են հանդիսանում Կոնվենցիայի իրագործման ճանապարհին (պարտադիր չէ):

Պատասխան՝

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ §Հայաստանի Հանրապետությունը իխնքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է¦:

Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն §Պետության իշխանությունն իրականացվում է Սահամանադրության և օրենքներին համապատասխան օրենսդիր, գործադիր և դատական իշխանության տաարնջատման սկզբունքի հիման վրա¦:

Պետական և տեղական ինքնկառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի՝ §Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակության շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց դիմումներ և առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք¦:

ՀՀ-ն ունիտար հանրապետություն է՝ 29.74 հազ. քառ. տարածքով: Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ «ՀՀ-ում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը»: «Գործադիր իշխանությունը ՀՀ-ում իրականացնում է Կառավարությունը¦: ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ «Կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության ոլորտներում»:

ՀՀ-ում դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք: Սահմանադրության 91-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»: Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է»: Ներկայումս ՀՀ-ում գործում է մեկ մասնագիտացված դատարան՝ ՀՀ վարչական դատարանը և վերաքննիչ վարչական դատարանը: Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն « Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և դրա նորմերը գործում են անմիջականորեն: Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»: §Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին¦ ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ §Ուժի մեջ մտած Հայաստանի Հնարապետության միջազգային պայմանագրի նորմերը Հայաստանի Հնարապետության տարածքում գործում են անմիջականորեն¦:

Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը (Սահմանադրության հոդ.10): Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ «Տնտեսական սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝... 10) իրականացնել ներկա և ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն»:

Հայաստանում գոյություն ունեն Օրհուսի Կոնվենցիայի դրույթների իրականացման առումով որոշակի ֆինանսական դժվարություններ՝ Կոնվենցիայի դրույթների իրականացման խնդիրների վերաբերյալ գիտագործնական հետազոտություններ իրացնելու և արդյունքները մասնագետներին հասանելի դարձնելու հետ: Թեև առկա է որոշակի առաջընթաց, այդուհանդերձ ՕԿ-ի դրույթների իրականացման համար շարունակում են խոչընդոտներ մնալ պետական ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների ոչ բավարար իրազեկվածությունը էկոլոգիական օրենսդրության վերաբերյալ:

III. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 8-ՐԴ ԿԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերի հիմնական դրույթների իրագործմանն ուղղված օրենսդրական և կարգավորող այլ միջոցները:

Պարզաբանեք, թե ինչպես են իրագործվել նշված դրույթները: Մասնավորապես ներկայացրեք.

ա) **2-րդ կետի** մասով – ձեռնարկված միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու, որպեսզի պաշտոնատար անձինք և պետական մարմիններն անհրաժեշտության դեպքում ուղղորդեն հասարակությանը:

բ) **3-րդ կետի** մասով - էկոլոգիական կրթության և շրջակա միջավայրի հիմնահարցերի առնչությամբ հասարակայնության իրազեկության մակարդակի բարձրացմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

գ) **4-րդ կետի** մասով - շրջակա միջավայրի պաշտպանությանն աջակցող միությունների, կազմակերպությունների կամ խմբերի պատշաճ ճանաչման և նրանց համապատասխան աջակցություն ցույց տալու ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

դ) **7-րդ կետի** մասով - միջազգային գործընթացներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանն աջակցելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները, մասնավորապես՝

(i) Նախարարությունների ներսում և վերջիններիս միջև համագործակցության շրջանակներում այլ համապատասխան միջազգային ֆորումներում ընդգրկված պաշտոնյաներին 3-րդ հոդվածի 7-րդ կետի, Ալմաթայի սկզբունքների վերաբերյալ

իրազեկման գործընթացը համակարգելուն ուղղված միջոցների մասին՝ նշելով, թե արդյոք այդ միջոցները շարունակական են։

(ii) Ազգային մակարդակում Միջազգային ֆորումների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելուն ուղղված միջոցները, ներառյալ այն, թե որ փուլում է ապահովվել տեղեկատվության մատչելիությունը։

(iii) Միջազգային ֆորումների առնչությամբ ազգային մակարդակում հասարակայնության մասնակցությունը հնարավոր դարձնելու և խթանելու ուղղությամբ (օրինակ՝ հրավիրել ՀԿ-ներին Կողմի պատվիրակության կազմում մասնակցելու բնապահպանական հարցերով միջազգային բանակցություններին կամ ներգրավել ՀԿ-ներին Կողմի պաշտոնական դիրքորոշումը մշակելու աշխատանքներին)՝ ներառյալ այն, թե որ փուլում է ապահովվել տեղեկատվության մատչելիությունը։

(iv) Այլ միջազգային ֆորումներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

(v) Այլ միջազգային ֆորումների աշխատանքային ծրագրերում, նախագծերում, որոշումներում և այլ նշանակալից արդյունքներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

ե) **8-րդ կետի** մասով - սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան իրենց իրավունքներն իրականացնող անձանց պատժի, հետապնդման կամ հալածանքի չենթարկվելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

Պատասխան՝

<u>Կետ 2</u> ՀՀ Սահմանադրության 33.2 հոդվածի համաձայն. ¦ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»։

Համաձայն ՀՀ կառավարության 22.04.2004 թ. ընդունած N 524-Ն §Տեղեկատվական վերլուծական կենտրոն¦ ՊՈԱԿ կողմից բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման գծով 2004 թվականի պետական պատվերը հաստատելու մասին» որոշման և ՀՀ Բնապահպանության նախարարի հրապարակած N 86-Ն հրամանի (պետական գրանցման թիվ 10504095, 06.04.2004թ.) տարբեր ստորաբաժանումներ տրամադրում են բնապահպանական տեղեկատվություն

Տեղեկատվական-վերլուծական Կենտրոնին՝ նախարարության ինտերնետային կայքում տեղադրելու համար (հաստատված է նախարարության ստորաբաժանումների կողմից տրամադրվող տեղեկատվության ցանկը, և սահմանված է նրա հավաքագրման և տարածման կարգը:
Ստեղծվել են էլեկտրոնային կայքեր (www.dilijan.am, www.lsevanpark.am, **dilijanpark.am**), որտեղից կարելի է ստանալ տեղեկատվության ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին: Գործում են նաև www.nature-ic.am, www.armmonitoring.am կայքերը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության/ՀՀ ԱՎԾ/ վեբ-կայքում /www.armstat.am/, տեղադրված է հանրապետության էկոլոգիական վիճակի վերաբերյալ ամբողջական և բոլորի համար մատչելի վիճակագրական տեղեկատվությունը («Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» տարեկան վիճակագրական ժողովածու): Այն pdf ֆորմատի հետ զուգահեռ մատչելի է Word և Excel ֆորմատներով՝ բարձրացնելու սպառողների համար մատչելիությունը և օգտավետությունը:

Գործարկվում է նաև ՀՀ ԱՎԾ տվյալների բազաների կայքը՝ http://armstatbank.am, որն ավելի դյուրին կդարձնի վիճակագրական տեղեկատվական բազաներից օգտվելը: Գործընթացն ընթացքի մեջ է:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների բացասական ազդեցության բացառման նպատակով 2009-2010թթ. հաստատվել և գրանցվել են մի շարք սանիտարական և հակահամաճարակային կանոններ և նորմեր, այդ թվում՝ վտանգավոր թափոնների, բժշկական թափոնների, բնակավայրերի սանիտարական պահպանման, հողի որակի, հասարարական զուգարանների, մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարների, տուբերկուլյոզի դեմ պայքարի վերաբերյալ: Սանիտարական օրենսդրության բոլոր գործող նորմատիվ ակտերը տեղադրվում են ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքում (www.moh.am) և մատչելի են ինչպես տնտեսվարողների, այնպես էլ բնակչության համար: Այդ ակտերը հասանելի են նաև www. arlis.am կայքում:

ՀՀ նախարարություններում գործում են հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումները: Նախարարությունների էլեկտրոնային կայքեր (2004թ. սկսած), նախարարությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հասարակության համար դարձել են մատչելի:

Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում՝ www.yerevan.am, ինչպես պաշտոնական լրահոսում, այնպես էլ առանձին §Բնապահպանություն¦ բաժնում տեղադրվում է արված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ մշտապես թարմացվող տեղեկատվություն:
Ստեղծվել է 2012 թ-ին www.iyerevan.am կայքէջը, որը հնարավորություն է տալիս բնակիչներին հանդես գալ բոլոր ոլորտներին առնչվող առաջարկություններով, հարցումներով և այլն:ՀՀ Վարչապետի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N 1122-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայից բխող

Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման մասին» N 774-Ա որոշումը: Հաստատվել է միջգերատեսչական հանձնաժողովի նոր կազմ և դրա աշխատակարգը: Միջգերատեսչական հանձնաժողի, կազմի մեջ մտնում են մի շարք նախարարների և այլ գերատեսչությունների ղեկավարների տեղակալներ, ինչպես նաև ներկայացուցիչներ հասարակական սեկտորից: Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման հիմնական նպատակը ՕԿ-ից բխող ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների մշակման աշխատանքների կատարումն է: ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 17-ի նիստի արձանագրության թիվ 15 քաղվածքում ամրագրվել է վարչապետի հանձնարարականն ուղղված հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պետական մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվող իրավական ակտերի նախագծերը համապատասխան պետական մարմինների ինտերնետային կայքերում տեղադրելու համար: Այդ ուղղությամբ կատարվել է մեծածավալ աշխատանք,

Երևանի քաղաքապետին մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու նպատակով Երևանի քաղաքապետի 27.07.2012թ. հ. 5488-Ա որոշմամբ ստեղծվել են Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինության խորհրդի բնապահպանության հանձնաժողովը, որը կազմված է բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, գիտնականներից և քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության աշխատակիցներից:

Հանձնաժողովը նիստերից հետո հանդես է գալիս մամուլի-ասուլիսով քննարկված հարցերը հանրությանը ներկայացնելու համար:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի «Տեսչություններում կառավարման խորհուրդներ ստեղծելու մասին» N859-Ն որոշման՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը հայտարարություն էր տարածել հասարակական կազմակերպությունների և այլ գործարար միավորումների դիմումների ընդունելության վերաբերյալ՝ ՀՀ բնապահպանության նախարարության պետական տեսչության կառավարման խորհրդի կազմում ընդգրկելու համար: Նշված որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Խորհրդում ընդգրկվում են դիմումն առաջինը ներկայացնողները՝ ըստ հերթականության: Ընտրության այս մեխանիզմը տրամաբանական չէ, և մասնկացկությունը կարող է ձևական լինել: Անհրաժեշտ է այս մոտեցումը վերնայել և կառավարման խորհրդի կազմում որպես հասարակական կազմակերպությունների ընտրության չափանիշ սահմանել վերջիններիս պրոֆեսիոնալիզմը, համապատասխան փորձը և այլն:

2010-2013թթ. ստեղծվել և գործում է www.e-gov.am կայքը, որը մեկտեղում է ՀՀ պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների հիմնապաշարները և հարմարավետ միջավայր ստեղծում դրանց օգտագործման համար:Գործող իրավական ակտերը (ըստ ոլորտների) մատչելի են հանրապետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերում, իսկ ՀՀ Ազգային ժողովի կայքում

(www.parliament.am) ՀՀ օրենքների մեծամասնությունը մատչելի է նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով: Համապատասխան քայլեր են ձեռնարկվում ապահովելու համար դատական ակտերի մատչելիությունը: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքում (www.concourt.am) մատչելի են ՍԴ որոշումները, իսկ DATALEX էլեկտրոնային շտեմարանը հնարավորություն է ընձեռում ստանալ 2005 թվականից հետո ՀՀ բոլոր դատարանների ընդունած վերջնական դատական ակտերը: ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները մատչելի են www.arlis.am կայքում: Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ գործերով ՀՀ դատարանների որոշումները համակարգված ձևով մատչելի են ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի (այսուհետ՝ ԷԻԳԿ) ինտերնետային կայքում (www.elrc.ysu.am):

Կետ 3. 2001 թ. ընդունվել է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը: 2009 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը»: 25.11.2010թ. ընդունվել է ՀՀ կառավարության N1551-Ն որոշումը «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող 2011-2015թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»: 2009 թվականի հուլիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը հանրակրթության սկզբունքների թվում սահմանում է նաև աշակերտների մոտ բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը: Բնապահպանական կրթության վերաբերյալ պահանջները տարածվում են նաև ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացվածության թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվող հանրակրթության վրա:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում ներդրվել է հայ փորձագետների կողմից մշակված բնապահպանական ոլորտին առնչվող նոր ուսումնական ձեռնարկ՝ «Բնապահպանության ոլորտի քաղաքացիական/հանրային ծառայողների վերապատրաստման ուսումնամեթոդական ուղեցույց-ձեռնարկ»:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության մասնագետների օգնությամբ և համագործակցությամբ 2011թ. սկզբից լույս է տեսնում §ԿԱՆԱՉ ԼՈՌԻ¦ բնագիտական, բնապահպանական ամսագիրը, որտեղ տպագրվում են մարզի բնապահպանական խնդիրներին նվիրված հոդվածներ:

ՀՀ կառավարության ներդրված ջանքերի շնորհիվ, ինչպես նաև ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի, Բնության Պահպանության Միջազգային Միության, Բնության Համաշխարհային Հիմնադրամի և Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերության օժանդակությամբ ՀՀ բնապահպանության նախարարությունը ստանձնեց և հաջողությամբ ավարտեց դեռևս 1987թ. (կենդանիների Կարմիր գիրք) և 1989 թ-ին (բույսերի Կարմիր գիրք)

հրատարակված Կարմիր գրքերի լրամշակման և հրատարակության աշխատանքները: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն և N 72-Ն որոշումներով հաստատվել են ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների Կարմիր գրքերը:

ՀՀ Կարմիր գրքերը պատրաստվել են Բնության Պահպանության Միջազգային Միության կողմից մշակված միջազգային չափանիշներին համապատասխան:

Մշակման աշխատանքներին մասնակցել են ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտները և գիտական կենտրոնները, միջազգային և հասարակական կազմակերպությունները:

Կարմիր գրքերը տրամադրվել են ՀՀ բոլոր Օրհուս կենտրոններին, մարզպետարաններին, գրադարաններին, ԲՈՒՀ-երին, դեսպանատներին, արտասահմանյան կազմակերպություններին, ՈԿԿ-ներին: Կարմիր գրքերի նյութերը տեղադրվել են ՀՀ բնապահպանության նախարարության կայքում (www.mnp.am):

2010 թվականին հրատարակվել է նաև §ՀՀ Կարմիր գրքի էջերից¦ գրքույկը, որտեղ բերվում են տեղեկություններ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված որոշ բուսական և կենդանական տեսակների վերաբերյալ: Այն նախատեսված է մանկավարժների, ուսանողների, բնապահպանական և բնօգտագործման բնագավառի մասնագետների, ընթերցողների լայն շրջանի համար:

ՀՀ մարզերում ազգաբնակչության էկոկրթության, բնապահպանական օրենսդրության իմացության բարձրացման, ինչպես նաև հանրային քննարկումների, հասարակական լսումների և այլ բնապահպանական հիմնախնդիրների վերլուծությանը նրանց մասնակցությունն ապահովելու համար մարզպետարանի բնապահպանության բաժնի կողմից կազմակերպող միջոցառումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում, ազդակիր համայնքներում և մարզում գործող բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում: Միջոցառումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ: Ստեփանավանի Օրհուս Կենտրոնում գործում է ուսանողներից կազմված բնապահպանների խումբ, որոնք վեր են հանում Ստեփանավանի և հարակից գյուղերի բնապահպանական խնդիրները:

Արմավիրի մարզի կենսաբազմազանության ներկա վիճակի, նրանց պահպանության ու բազմացման կազմակերպան համար ուսումնասիրվել ու հրատարակվել է՝ 1200 օրինակով, §Արմավիրի մարզի բույսերի ու կենդանիների Կարմիր գիրքը¦: Գիրքը տրամադրվել է մարզի բոլոր համայնքներիների գրադարաններին, դպրոցներին, նախադպրոցական հաստատություններին:

Մարզպետարանի մասնագետները կազմակերպել են սեմինարներ ու հանդեսներ՝ դպրոցների համապատասխան մանկավարժների հետ համատեղ, դպրոցներում և համայնքի բնակչության լայն շրջանում մարզի կենսաբազմազանության խնդիրների վերաբերյալ:

Մարզի դպրոցներում ստեղծվել են §էկոլոգի¦՝ ու §կենսաբանի¦՝ անկյուններ,

լսարաններ ու խմբակներ:
Մարզի լրատվամիջոցներով §՝Հայրենականչ¦՝, §Հայ ֆերմեր՝¦ թերթերի էջերում պարբերաբար լուսաբանվում է մարզի շրջակա միջավայր վիճակի և նրա բարելավման ուղորդված հաղորդումներ ու հոդվածներ:

Կետ 4. 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրությունում հանրաքվեի միջոցով կատարվեցին փոփոխություններ: Այդ փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի 5-րդ պարբերությունն ամրագրեց լրացուցիչ երաշխիք հասարակական միավորումների անկախ և թափանցիկ գործունեության ապահովման համար: Համաձայն այդ դրույթի՝ միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը շրջակա միջավայրի պահպանությանն աջակցող բազմապիսի միավորումներից որպես իրավունքի սուբյեկտ ճանաչում է հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին, որոնք համարվում են ոչ առևտրային իրավաբանական անձանց տեսակներ և կարող են, իրենց կանոնադրային խնդիրներից ելնելով, օգտվել օրենքով սահմանված իրավունքների ամբողջ ծավալից: Այդ կազմակերպությունների կարգավիճակը հստակ ամրագրված է 2001 թվականի ապրիլի 4-ի «Հասարակական կազմակերպությունների մասին» և 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքներում: Բնապահպանության ոլորտում գործունեություն ծավալող ոչ ֆորմալ խմբերի հասարակական ակտիվությունը թեև չի արգելվում, սակայն այդ խմբերը որպես իրավունքի կոլեկտիվ սուբյեկտ չեն ճանաչվում:

Իրավաբանական անձանց, այդ թվում՝ ՈԿԿ-ների պետական գրանցման գործընթացը պարզեցնելու նպատակով մշակվել է համապատասխան օրենսդրություն, որը հնարավորություն է տալիս առցանց համակարգով գրանցել իրավաբանական անձ: Համակարգը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով, որը միացված է կենտրոնական տվյալների շտեմարանին: Այս համակարգը թույլ է տալիս խուսափել ավելորդ վարչարարությունից և կոռուպցիոն ռիսկերից:

Կետ 7. <u>Ազգային օրենսդրությամբ միջազգային ֆորումներում հասարակայնության մասնակցության վերաբերյալ ուղղակի պահանջներ ամրագրված չեն:</u> Այդուհանդերձ, պետական մարմինները հաճախ կազմակերպում են միջազգային ֆորումներում ներկայացնելու համար պատրաստվող զեկույցների և հրատարակությունների վերաբերյալ հասարակական լսումներ: Միջազգային ֆորումներում մասնակցում են ներկայացուցիչներ և' նախարարությունից, և' ՈԿԿ-ներից: Շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող գրեթե բոլոր ծրագրերի շրջանակներում գործում են Օրհուսի Կոնվենցիայի երկու սկզբունքներ՝ տեղեկատվության մատչելիությունը և հասարակության մասնակցության ապահովումը:

Սկսած 2008 թվականից ԵՊՀ ԷԻԳԿ կողմից տարբեր մասնագիտական խմբերի, քաղաքացիական ծառայողների և ՈԿԿ-ների համար պարբերաբար

կազմակերպվող թեմատիկ դասընթացների շրջանակներում հասարակայնության ներկայացուցիչներին ներկայացվել են միջազգային ֆորումներին հասարակայնության մասնակցության հիմնական սկզբունքները, այդ թվում՝ Ալմաթայի սկզբունքները:

(i) 2010 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հրատարակվել է Հայաստանում գործող բնապահպանական ոլորտի տեղեկագիր, որը տվյալներ է պարունակում բնապահպանական ՈԿԿ-ների գործունեության հիմնական տեսակների և ուղղությունների վերաբերյալ: Դա առաջին տեղեկագիրը չէ, և նմանատիպ տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է:

(ii) Նմանատիպ հրատարակությունները հնարավորություն են տալիս պետական մարմիններին արդյունավետ կերպով որոշելու շահագրգիռ հասարակայնության շրջանակը, ժամանակին և համարժեք իրազեկել վերջիններիս այդ գործընթացների մասին՝ դրանով իսկ բարձրացնելով մասնակցության արդյունավետությունը:

(iii) Միջազգային ֆորումների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում տարածվում է էլեկտրոնային փոստով, որը հասանելիությունը շահագրգիռ կողմերին զգալիորեն ընդլայնվել է: Միաժամանակ, պետական մարմինների կազմում գործող հասարակայնության հետ կապերի բաժինները միջազգային ֆորումների վերաբերյալ հասարակայնության շրջանում տեղեկատվություն տարածելու գործառույթ չունեն: ՁԼՄ-ները ևս պասիվ են այս հարցում:

Միջազգային ֆորումների վերաբերյալ հասարակայնության իրազեկումն առավել արդյունավետ է այն դեպքերում, երբ տեղեկատվությունը տարածվում է անմիջականորեն այս կամ այն միջազգային ֆորումի կողմից:

(iv) Միջազգային ֆորումների առնչությամբ ազգային մակարդակում հասարակայնության մասնակցությունը հնարավոր դարձնելու ուղղությամբ պետական մարմինները հիմնականում առաջնորդվում են խնդրի մասնագիտական ասպեկտներով: Այդուհանդերձ, որոշ ՈԿԿ-ներ սեփական նախաձեռնությամբ կազմակերպում են քննարկումներ և ներգրավում հասարակայնության ներկայացուցիչներին: ՀԿ-ները տարեկան 2 անգամ հնարավորություն ունեն մասնակցելու ԳԷՀ-ի կառավարման խորհրդին նախորդող ՀԿ-ների համար անցկացվող հանդիպմանը:

(v) Այլ միջազգային ֆորումների աշխատանքային ծրագրերում, նախագծերում, որոշումներում և այլ նշանակալից արդյունքներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերն իրենց հիմքում չունեն ներպետական օրենսդրությամբ ամրագրված պահանջներ և հանդիսանում են պետական մարմինների և միջազգային ֆորումների նախաձեռնության արդյունք:

<u>Կետ 8.</u> ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի համաձայն՝«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև»:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածն ապահովում է խոսքի ազատության և

իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որի ներքո պետք է հասկանալ տեղեկատվության (այդ թվում՝ բնապահպանական) տարածման իրավունքը:

Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Սահմանադրությունում սպառիչ կերպով թվարկված են այն դեպքերը, երբ օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկելու հնարավորություն: Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»: Վերը նշված մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրված են ՀՀ ընթացիկ օրենսդրությամբ:

IV. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 3-րդ հոդվածի վերոնշյալ կետերից ցանկացածի դրույթների իրագործման ժամանակ:

Պատասխան՝

Կետ 2. Պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից անհրաժեշտության դեպքում հասարակայնությանն ուղղորդելու առնչությամբ ծագող խոչընդոտները հիմնականում հանգում են հետևյալին. տվյալ պետական մարմինը չի տնօրինում պահանջվող տեղեկատվությունը, պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը ոչ միշտ է համապատասխանում հարցման բովանդակությանը: Նշված խոչընդոտները պայմանավորված են հետևյալ պատճառներով.

- պետական մարմինների պաշտոնյաների իրազեկվածության և պատասխանատվության ոչ բավարար մակարդակ,
- ֆինանսական, տեխնիկական և կազմակերպչական բնույթի խոչընդոտներ
-գերատեսչական չհամընկնող շահեր և այլն:

Կետ 3. Թեև էկոկրթության և հասարակայնության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված բազմաբնույթ միջոցներ ձեռնարկվում են պետական մարմինների, տարբեր ուսումնական հաստատությունների, Օրհուս կենտրոնների և ՈԿԿ-ների կողմից, այդուհանդերձ գործընթացի արդյունավետությունը տուժում է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդպիսի ծրագրերն իրականացվում են ոչ համակարգված և հաճախ ոչ հետևողականորեն: Երբեմն հրատարակությունները հասցեական չեն և իրականում չեն ծառայում էկոկրթության խնդիրներին:

Հանրակրթական դպրոցում դասավանդվում են շրջակա միջավայրի

վերաբերյալ ինտեգրված և զուտ էկոլոգիական դասընթացներ, այդ թվում՝ բնօգտագործում և բնապահպանություն, էկոլոգիա և էներգիայի և ռեսուրսների օգտագործում առարկաները: Այդհանդերձ, հանրակրթության բնագավառում ևս առկա են որոշակի խոչընդոտներ:

Կետ 7. Միջազգային ֆորումներին հասարակայնության մասնակցությունը խթանելու և աջակցություն ցուցաբերելու ոլորտում առկա են հետևյալ խոչընդոտները.

- ֆինանսական խոչընդոտներ,
- ՈԿԿ-ների թափանցիկ ընտրության ընթացակարգի և հստակ չափանիշների բացակայություն:

V. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն 3-րդ հոդվածի հիմնական դրույթների կիրառման վերաբերյալ:

Պատասխան՝

Շատ ՈԿԿ-ներ իրենց գործունեության մեջ հիմնվում են ՕԿ-ի դրույթների վրա: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ընդունվող իրավական ակտերը և դատական ակտերը որպես կանոն հիմնված են ՕԿ-ի դրույթների վրա:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշակերտների շրջանում էկոլոգիական կրթության կազմակերպման և այդ բնագավառում նրանց գիտելիքների և իրազեկվածության բարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացնում է հետևյալ ծրագրերը

- հանրակրթական տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) էկոլոգիական կրթությունն իրականացվում է «Ես և շրջակա աշխարհը» և «Կյանքի հմտություններ» դասընթացների միջոցով
- հանրակրթութական միջին դպրոցում դպրոցում (5-9-րդ դասարաններ)՝ «Կենսաբանություն», «Կյանքի հմտություններ», «Աշխարհագրություն»առարկաների ծրագրի շրջանակում:
- հանրակրթական ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ)՝ «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաների շրջանակում դասավանդվում է «Բնօգտագործում և բնապահպանության հիմունքներ» միջառարկայական ինտեգրացված ծրագիրը:

Միջին մասնագիտական կրթական հաստատություններում և ԲՈՒՀ-երում դասավանդվում է «էկոլոգիա/բնապահպանություն» կամ դրան համարժեք առարկաներ: Որոշ ֆակուլտետների մասնագիտացումը հաշվի առնելով դասավանդվում են նաև էկոլոգիական իրավունք, ջրաօգտագործման

իրավունք, ընդերքաօգտագործման իրավուքն և ԵՄ էկոլոգիական իրավունք առարկաները:

Ներկայումս ԲՈՒՀ-երում հաստատվել են բոլոր մասնագիտությունների գծով չափորոշիչները, որոնցում ներառվել են «Էկոլոգիա» և «Էկոլոգիայի հիմունքներ» առարկաները: Բացի դրանից, որոշ ԲՈՒՀ-երում դասավանդվում են շուրջ 30 էկոլոգիական ուղղվածության ՝ «Սոցիալական էկոլոգիա», «Մարդու էկոլոգիա», «Ռադիացիոն էկոլոգիա», «Էկոլոգիական իրավունք», «Լանդշաֆտագիտություն», «Լանդշաֆտային էկոլոգիա», «Քաղաքաշինություն և էկոլոգիա», «Ճարտարապետական նախագծման էկոլոգիական հիմունքներ» և այլն : ՀՀ կառավարության 19.08.2010թ. N296 որոշմամբ հաստատվել է «Մաքուր հայրենիք» բնապահպանական ծրագիրը, որում ներառված է նաև «Էկոկրթությունը և էկոդաստիարակությունը որպես հանրային խնդիր» իրազեկման և կրթադաստիարակչական ուղղվածություն ունեցող եռամյա գործողությունը, որը ներկայումս եզրափակիչ փուլում է Մտցվել են նաև հատուկ դասաժամեր քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ուսումնական ծրագրերում:

Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ շարունակվում են կազմակերպվել դասընթացներ դատավորների և իրավակիրառողների համար: ՈԿԿ-ների դատավարական իարավասուբյեկտության հարցերի վերաբերյալ դատավորների, ՈԿԿ-ների և փաստաբանների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար ԵՊՀ ԷԻԳԿ-ն ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ ծրագրում է 2014թ-ին անցկացնել աշխատաժողով, որի արդյունքները կներկայացվեն օրենսդիր և դատական մարմիններին:

2009 թվականից ՀՀ դատական դպրոցի հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԷԻԳԿ-ն յուրաքանչյուր կիսամյակ դատավորների վերապատրաստման ծրագրով 16 ակադեմիական ժամ տևողությամբ էկոլոգիական իրավունքի դասընթացներ է անցկացնում գործող դատավորների, դատավորների թեկնածուների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար: ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության հետ ձեռք է բերվել համաձայնություն և Կենտրոնի մասնագետները կանոնավոր հիմունքներով համապատասխան դասընթացներ են անցկացնում նաև քաղաքացիական ծառայողների համար վերապատրաստման ծրագրի շրջանակներում:

Պետական կառույցների, ՈԿԿ-ների և գիտական-կրթական հատվածի համատեղ ջանքերով, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի կառույցների, USAID և այլ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվում են բազմաթիվ էկոլոգիական դասընթացներ, սեմինարներ, ամառային դպրոցներ բնակչության հիմնական խմբերի՝ դպրոցականներից մինչև որոշումներ ընդունողների համար:

Հրատարակվում են համապատասխան ուսումնական ձեռնարկներ, էկո-բյուլետեններ, պլակատներ, նկարահանվում են տեսաֆիլմեր, անցկացվում են լրագրող-էկոլոգների խրախուսական մրցույթներ, կազմակերպվում են

ուսուցողական հանդիպումներ ուսուցիչների հետ: 2010 թվականից լույս է տեսնում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի եռամսյակային պարբերականը: Բացի այդ, թողարկվում են նաև առանձին բյուլետեններ, տեղեկագրեր Հայաստանի Հանրապետության քաղաքների օդային ավազանի և մակերևութային ջրերի վիճակի վերաբերյալ:
Ստեղծվել և պարբերաբար թարմացվում է www.armozone.am էլեկտրոնային կայքը՝ : Անցկացվում են իրազեկման սեմինարներ, ինչպես նաև հաղորդումներ հեռուստատեսությամբ: Հրատարակվում են հոդվածներ օրաթերթերում:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ հրատարակվել են շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող տեղեկատվական նյութեր: 2009 թվականին ԵՊՀ ԷԻԳԿ կողմից հրատարակվել է ՀՀ էկոլոգիական իրավունք (նորմատիվ ակտերի ժողովածուն), որում ներառվել են ՀՀ էկոլոգիական օրենսդրության համակարգը կազմող բոլոր իրավական ակտերը: Ժողովածուում ընդգրկված իրավական ակտերը դասակարգելիս կիրառված մոտեցումը թույլ է տալիս օգտվողներին հեշտությամբ կողմնորոշվել ծավալուն նորմատիվ նյութի հետ աշխատելիս:

2012թ. §Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն¦ ՀԿ-ի կողմից Եվրոմիության կողմից ֆինանսավորվող §Անտառային օրենսդրության կիրառման և անտառային ոլորտի կառավարման բարելավման Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրներում և Ռուսաստանում¦ (ENPI-FLEG) տարածաշրջանային ծրագրի շրջանակներում որպես WWF հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող §Անտառային օրենսդրության ոլորտում հզորությունների ստեղծում՝ անտառային օրենսդրության վերաբերյալ ձեռնարկի մշակման հրատարակման և ուսուցողական դասընթացների իրականացման միջոցով¦ գործողության մաս մշակվել և հրատարակվել է ՀՀ անտառային օրենսդրության ուղեցույցը: ՀՀ անտառային օրենսդրության ուղեցույցը առաջին փորձն է համալիր ձևով մեկնաբանելու ՀՀ անտառային օրենսգիրքը և անտառային օրենսդրության համակարգը ձևավորող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթները: Այն ներառում է նաև առաջարկություններ մեկնաբանող դրույթներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Պետության, ՈԿԿ-ների, գիտակրթական սեկտորի և միջազգային կազմակերպությունների համատեղ ջանքերով երեխաների և երիտասարդների համար կազմակերպվում են ամառային դասընթացներ, պարապմունքներ, ինչպես նաև՝ սեմինարներ պետական սեկտորի ներկայացուցիչների համար: Մասնավորապես, 2007թ.-ից սկսած *«SUNCHILD» ՈԿԿ-ի (www.sunchild.am)* ջանքերով կազմակերպվում են ամառային բնապահպանական ճամբարներ 7-10-րդ դասարանի երեխաների համար: 2013թ-ի հոկտեմբերին մեկնարկել է Արևորդի 4-րդ բնապահպանական միջազգային փառատոնը:

2013թ-ի հունիսի 28-ին Երևանի կենդանաբանական այգում տեղի ունեցավ <<Կանաչ դպրոց>> նախագծի եզրափակիչ միջոցառումը: «Կանաչ դպրոց» նախագիծն իրականացվում էր Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կողմից՝ Կոկա-Կոլա

հիմնադրամի աջակցությամբ:

Երևանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ ևս պարբերաբար կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, որոնք նպաստում են էկոլոգիական կրթությանը և շրջակա միջավայրի հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը: Նշված սեմինարները հիմնականում կազմակերպվում են ըստ էկոլոգիական օրացույցի, նշվում են միջազգային էկոլոգիական օրերը և համապատասխան փորձագետների կողմից (կենտրոնը դիմում է ՀՀ բնապահպանության նախարարությանը, միջազգային և հասարակական կառույցներին, որոնք համապատասխան փորձագետներ են տրամադրում) մասնակիցներին ներկայացվում է տեղեկատվություն գլոբալ և տեղական էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ: Նշված սեմինարները կազմակերպվում են տարբեր թիրախային խմբերի համար՝ դպրոցականների, տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողների, պետական մարմինների աշխատակիցների, հասարակական, միջազգային կառույցների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար: Կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվում են նաև էկոկրթության և էկոդաստիարակության մակարդակի բարձրացմանը նպաստող մի շարք այլ միջոցառումներ՝ շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող թեմաներով մրցույթներ, ցուցահանդեսներ, լրացուցիչ դասընթացներ մանկապարտեզներում, դպրոցներում ու ԲՈՒՀ-երում, բաց դասեր և ֆիլմերի դիտումներ, ծառատունկեր և այլն: 2013թ. ԷԻԳԿ-ում իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմաներով §Հողային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում և ԱՄՆ-ում¦, §Շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելման և հսկման կարգավորումը ՀՀ-ում¦, §Լյուիս ընդ Կլարկ դպրոցի էկոլոգիական իրավունքի ծրագրի¦ և այլն:

ՕԿ-ի դրույթներն անմիջական կիրառում ունեն բնապահպանական միասնական տեղեկատվության կառավարման ոլորտում, մասնավորապես դրանք արտացոլվում են կառավարման մարմինների կանոնադրություններում՝ վերացնելու սահմանափակումները վարչական տեղեկույթի հավաքագրման ու տրամադրման գործընթացներում:

VI. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

www.nature.am, www.gov.am., www.mnp.am, www.aarhus.am, www.court.am, www.armstat.am www.elrc.ysu.am, armozone.am, www.ecacool.com:

VII. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական և կարգավորող այլ միջոցներ՝ ուղղված

էկոլոգիական տեղեկատվության վերաբերյալ 4-րդ հոդվածի դրույթների իրագործմանը, որոնք վերաբերում են բնապահպանական տեղեկատվության մատչելիությանը։

Պարզաբանեք, թե ինչ կերպ են իրագործվում 4-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթները։ Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ)։ Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

ա) **1-ին կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք կապահովեն, որպեսզի.

(i) յուրաքանչյուր ոք կարողանա ստանալ տեղեկատվություն առանց իր շահագրգռվածությունն արտահայտելու պահանջի,

(ii) տրամադրվեն պահանջվող տեղեկատվությունը պարունակող իրական փաստաթղթերի պատճենները,

(iii) տեղեկատվությունը տրմադրվի պահանջվող ձևով։

բ) **2-րդ կետում** սահմանված ժամկետների պահպանման ուղղությամբ ձեռնարկված միջոցները.

գ) **3-րդ և 4-րդ կետերի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված

(i) հարցումներից բացառություններ նախատեսելուն,

(ii) 4-րդ կետի վերջում նշված հասարակայնության շահագրգռվածության չափանիշի կիրառման ապահովմանը։

դ) **5-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք կապահովեն, որ հարցվող էկոլոգիական տեղեկատվությունը չտնօրինող պետական մարմնի կողմից իրականացվեն անհրաժեշտ քայլեր։

ե) **6-րդ կետի** մասով՝ տեղեկատվության առանձնացման և դրա մատչելիության ապահովման վերաբերյալ պահանջի իրականցման ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

զ) **7-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի մերժումները կատարվեն ժամկետների և մերժումներին վերաբերող այլ պահանջների պահպանմամբ։

է) **8-րդ կետի** մասով՝ վճարի գանձմանը վերաբերող պահանջների կատարումն ապահովող միջոցները։

Պատասխան՝

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Սահմանադրության 27.1 հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի իրավունքը՝ իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու: Իսկ Սահմանադրության 33.2 հոդվածի համաձայն՝ «Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի սահմանումների առումով կարևոր ենք համարում **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» (18.02.2004)** ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ներքո տրվող վարչական մարմինների հասկացությունը, որը սպառիչ է և ներառում է բոլոր վարչական մարմինները:
Թեև ՀՀ օրենսդրությամբ դեռևս սահմանված չէ §էկոլոգիական տեղեկատվություն¦ հասկացությունը, սակայն հանրապետությունում շրջանառվում է ՕԿ-ով տրված սահմանումը, որը իրավական ուժ ունի:

Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է «տեղեկություն» հասկացությունը. «տեղեկություն նշանակում է *անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)»:*

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 9-րդ կետի խտրականության բացակայության առնչությամբ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածը սահմանում է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

«Բնության պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության հիմունքները» 2007 թվականին ուժը կորցրած է ճանաչվել և մինչ օրս դրան փոխարինող իրավական ակտ չի ընդունվել:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (20.11.1995թ.) սահմանում է լիազորված մարմնի պարտականությունը (6-րդ հոդ. 3-րդ, 4-րդ կետեր) նախաձեռնող անձի կողմից ծանուցում ստանալուց հետո 7-օրյա ժամկետում իրազեկ պահել ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին: Ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը

զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են հաղորդում նախատեսվող գործունեության հասարակական լսումների տեղի և ժամանակի մասին: Այդ օրենքի համաձայն հասարակայնությունը տեղեկացվում է նաև նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերի մասնագիտական եզրակացության մասին: Օրենքը սահմանում է նաև յուրաքանչյուրի իրավունքը հասարակական լսումներից առաջ ծանոթանալու նախագծային փաստաթղթերին:

«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը (12.12.1992թ.) սահմանում է քաղաքացիների՝ շրջակա միջավայրի սանիտարահամաճարակային իրադրության վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվության և իրազեկման իրավունքը (10-րդ հոդված):

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է, որ սանիտարական կանոնների խախտման հետևանքով իրենց առողջությանը հասցված վնասի փոխհատուցում ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով, սակայն մինչ օրս այդ կարգը չի մշակվել, ինչն անհնարին է դարձնում օրենքի նորմի կիրառությունը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (05.05.1998թ.) սահմանում է քաղաքաշինական գործունեության, ինչպես նաև կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին ստույգ տեղեկություններ ստանալու իրավունքը:

Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են զանգվածային լրատվության միջոցներում հրապարակումներով, հասարակական քննարկումներով, ծրագրերի եւ նախագծերի ցուցադրման միջոցառումներով իրազեկել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կենսագործունեության միջավայրի, տարածքի գոտիավորման եւ քաղաքաշինական նախատեսվող այլ փոփոխությունների մասին:
Քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացքում հասարակայնության ներկայացուցիչներն իրավունք ունեն՝

ա) ստանալ ստույգ տեղեկություններ իրենց կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին.

բ) մինչեւ հրապարակված քաղաքաշինական ծրագրերի եւ նախագծերի հաստատումը՝ մասնակցել դրանց քննարկումներին, ներկայացնել իրավական եւ նորմատիվ ակտերով հիմնավորված դիտողություններ, առաջարկություններ, այլընտրանքային նախագծեր եւ ծրագրեր.

դ) դատական կարգով գանգատարկել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց գործողությունները: («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք 12-14-րդ հոդվածներ):

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (02.12.1998թ.) սահմանում է.

ա/ բնակչության ազդարարման պահանջ արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման մասին (5-րդ հոդվածի ա կետ) բ/ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերի հրապարակայնություն (6-րդ հոդվածի բ կետ),

ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 29-ի №1494-Ն որոշմամբ հաստատված կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգի 6-րդ կետով սահմանվում է բնակչության իրազեկումը ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաեւ բնական աղետների ու տեխնածին վթարների սպառնալիքի կամ արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում՝ ազդարարման համակարգի, հեռուստատեսության, ռադիոյի, էլեկտրոնային փոստի, զանգվածային լրատվության միջոցների, կենդանի հաղորդակցության եւ այլ միջոցներով:**«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի (01.02.1999թ.)** 12-րդ հոդվածում «Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեղեկություններ ստանալու իրավունք» վերնագրով սահմանվում է. «ՀՀ իրավաբանական և ֆիզիկական անձինք իրավունք ունեն պետական իրավասու մարմիններից ստանալ տեղեկություններ նախաձեռնող, կառուցող, շահագործող և շահագործումից հանվող ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության, ինչպես նաև ՀՀ-ում ճառագայթային իրավիճակի վերաբերյալ, եթե դրանք պետական կամ ծառայողական գաղտնիք չեն պարունակում:

ՀՀ ջրային օրենսգրքի (04.06.2002թ.) 20-րդ հոդվածը սահմանում է պետական կառավարման մարմնի լիազորությունը ջրի քաղաքականության, ծրագրի, ջրավազանային կառավարման, ջրօգտագործման թույլտվությունների նախագծերի վերաբերյալ հասարակայնության ծանուցումը: Համաձայն ջրային օրենսգրքի նույն հոդվածի յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմելու և 30 օրվա ընթացքում ստանալու տեղեկատվութուն ջրային ոլորտի մասին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ Ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան պետական լիազոր մարմինը իրականացնում է ջրային ռեսուրսների մոնիտորինգ և պատասխանատու է ջրային ռեսուրսների մոնիտորինգի համար: Նույն հոդվածի համաձայն ջրային ռեսուրսների համապատասխան կառավարումը և պահպանությունն ապահովելու նպատակով պետական ջրային կադաստրի տեղեկատվությունը մատչելի է:

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը (08.02.2012թ.) ստանդարտացման նպատակների շարքում նշում է շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը և չի սահմանում որևէ սահմանափակում նշված տեղեկատվության մատչելիության համար:

«Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն (2001թ.) տրվում է հիդրոօդերևութաբանական երևույթների ու պրոցեսների մասին հույժ շտապ տեղեկատվության սահմանումը. այն է՝ տարերային երևույթների և շրջակա միջավայրի աղտոտման վտանգավոր մակարդակների վերաբերյալ փաստացի և կանխատեսվող տեղեկատվությունը, որը սահմանված կարգով հաղորդվում է ստանալուց և մշակելուց անմիջապես հետո:

«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքը (04.04.2000թ.) Պետական վիճակագրությունն իրականացվում է պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ Ազգային վիճակագրական ծառայության և նրա տարածքային ու գործառնական ստորաբաժանումների կողմից (6-րդ հոդված): Պետական վիճակագրության իրականացման հիմքում ընկած է Պետական

վիճակագրության աշխատանքների ծրագիրը: Ծրագրով նախատեսված դիտարկումների անցկացման համար վիճակագրական տվյալները սահմանված կարգով տրամադրվում են անվճար՝ սպառողի համար նախընտրելի ֆորմատով՝ թղթային կամ էլեկտրոնային:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (2002թ.) 16-րդ հոդվածը սահմանում է, որ ավագանին (տեղական ինքնակառավարման մարմին) իրավունք ունի պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջել գաղտնի տեղեկություններ չպարունակող և համայնքի խնդիրներին վերաբերող տեղեկատվություն: Համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում նպաստում է ընդերքի, անտառների, ջրերի, մթնոլորտային օդի, ինչպես նաև կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումների իրականացմանը:

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի /(ընդունվել է 27.11.06թ.) 30-րդ հոդվածի համաձայն.

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջելու և ստանալու բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, օգտագործման և իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն:
2. Անձը բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող է դիմել լիազորված պետական մարմնին և (կամ) տեղական ինքնակառավարման այն մարմնին, որի վարչական սահմաններում է գտնվում տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքը:

«Բնապահպանական վերահսկողության մասին» (11.04.2005թ.) ՀՀ օրենքի հոդված 37-ի համաձայն «Հասարակայնությանը, ներառյալ՝ ՈԿԿ-ների պահանջով բնապահպանական օրենսդրության իրացման վերաբերյալ տեղեկատվությունը բնապահպանական պետական տեսչությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն հոդվածով սահմանված կարգով: Բնապահպանական օրենսդրության կիրարկումն արդյունավետ իրականացնելու նպատակով բնապահպանական պետական տեսչությունը կատարվող աշխատանքների մասին կարող է տեղեկացնել հասարակայնությանը՝ միաժամանակ պահպանելով գաղտնիությունն ու ձեռնպահ մնալով գործերի քննության ընթացքի մանրամասներ տրամադրելուց: Բնապահպանական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանումներին օրենսդրության խախտման դեպքերի վերաբերյալ հասարակայնության տրամադրած ակնհայտ կեղծ տեղեկատվությունը առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

2009 թվականից սկսած գործում և շարունակաբար ընդլայնվում է պետական մարմինների կայքերում տեղադրված էլեկտրոնային կառավարման համակարգը, որի բաղադրիչներից մեկը հնարավորություն է տալիս ապահովելու պետական մարմիններին ուղղված նամակների ընթացքի թափանցիկությունը: Հատուկ հսկիչ համարների օգնությամբ քաղաքացիները կարող են տեղեկանալ, թե պետական մարմնի որ պաշտոնյային է վերահասցեագրված առձեռն

հանձնված կամ փոստով ուղարկված նամակը:

Կետ 1. «Տեղեկատվության ազատության մասին» (23.09.2003թ.)ՀՀ օրենքում սահմանված են տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման հիմնական սկզբունքները՝

- տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման ընդհանուր կարգի հաստատում,
- տեղեկատվության որոնման և ստացման ազատության պաշտպանություն,
- տեղեկատվության տրամադրման մատչելիության ապահովում,
- հրապարակայնություն:

Բնապահպանական տեղեկատվության հասանելի դարձնելու գործընթացի հեշտացման նպատակով համապատասխան համակարգի ստեղծման գործընթացով անմիջականորեն զբաղվում է ՀՀ Բնապահպանության նախարարության «Տեղեկատվական-վերլուծական կենտրոնը», որը հավաքագրում, պահպանում և դասակարգում է բնապահպանական տեղեկատվությունը, կատարում է վերլուծություն, տեղադրում է տվյալների բազայի մեջ, տարածում է այն ընդհանուր հաշվետվության, ինչպես նաև Ազգային զեկույցի տեսքով, ինչպես տպագրված, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով:

Բացի վերոգրյալից, Բնապահպանական Տեղեկատվության Հասարակական Կենտրոնները կամ Օրհուս կենտրոնները հասարակությանն անվճար տրամադրում են որոշակի ծավալով բնապահպանական տեղեկատվություն: Քաղաքաշինության նախարարությունում գործում է քաղաքային տնտեսության ոլորտում թափոնների վերաբերյալ տեղեկատվության Հասարակական կենտրոն:

(i) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն դիմողը /տեղեկատվություն ստանալու համար/ պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

(ii) Որպես երաշխիք ՀՀ քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսվում են սանկցիաներ պաշտոնատար անձանց համար: Մասնավորապես, քրեական պատասխանատվություն է սահմանված շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու կամ դրանք դիտավորյալ աղավաղելու համար և վարչական պատասխանատվություն՝ պետական և տեղական նշանակության (գերատեսչական) քարտեզագրագեոդեզիական ֆոնդերի պահպանման, նյութերի և տվյալների բազմացման ու օգտագործման, տեղեկատվության տրամադրման հանրապետական կարգը խախտելու, վթարի փաստը թաքցնելու, վթարի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման կարգը խախտելու, ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելու, միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու կամ աղավաղելու, տեղեկություն (տվյալ) չտրամադրելու կամ կեղծ տեղեկություն (տվյալ) ներկայացնելու համար:

(iii) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետը ամրագրում է, որ գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ և դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկատվություն տնօրինողի համար առավել ընդունելի նյութական կրիչով:

Կետ 2.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է տեղեկատվության տրամադրման ավելի սեղմ ժամկետներ, քան նախատեսում է Օրհուսի կոնվենցիան: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1. Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
2. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,
3. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Թեև օրենքը սահմանում է գրավոր հարցմանը պատասխանելու բավականին սեղմ՝ 5-օրյա ժամկետ, սակայն այն իրատեսական չէ և հաճախ խախտվում է:

Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում»:

Կետ 3 և 4. Տեղեկատվության մերժման հիմքերը սահմանված են **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ** օրենքի 8-րդ հոդվածում, որոնք ըստ էության համապատասխանում են Կոնվենցիայի պահանջներին: Օրենքում բացակայում են Կոնվենցիայի Հոդված 4 4-րդ կետի (**է**) և (**ը**) ենթակետերով նախատեսված հիմքերը, որոնցից (**ը**) ենթակետը ունի զուտ բնապահպանական բնույթ:

Սույն օրենքը սահմանում է նաև, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Հարցումը ներկայացնողի կողմից իր շահագրգռվածությունը չարտահայտելու իրավունքն ամրագրված է «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքում: Մասնավորապես, 9-րդ հոդվածի 4-րդ մասին համաձայն. «Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը»:

Բացառություն կարող է լինել այն տեղեկատվությունը, որն իրենից ներկայացնում է պետական և ծառայողական գաղտնիք: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (03.12.1996 թ.)սահմանում է այն տեղեկատվության ցանկը, որը համարվում է պետական և ծառայողական գաղտնիք, ինչպես նաև այն տեղեկատվությունը, որը չի կարող համարվել այդպիսին (հոդ. 10.):

Պետական և ծառայողական գաղտնիք չեն կարող համարվել՝

ա/ քաղաքացիների առողջությանը և անվտանգությանը սպառնացող բացառիկ աղետների, ինչպես նաև տարերային աղետների (այդ թվում՝ պաշտոնապես կանխատեսվող) և նրանց հետևանքների մասին տեղեկությունները.

բ/ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնապահպանության, առողջապահության, կրթության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում իրական իրավիճակը ներկայացնող տեղեկությունները.

գ/ քաղաքացիների ազատությունների և իրավունքների սահմանափակման փաստերի, հանցագործությունների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները.

դ/ տեղեկություններ, որոնք ծառայողական կամ պետական գաղտնիքի շարքը դասվելիս, կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության մշակութային, հոգևոր, գիտա-տեխնիկական, սոցիալ-տնտեսական զարգացման պետական և ճյուղային ծրագրերի իրագործման վրա (օրենքի հոդ.10)։

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում (20.11.1995 թ.) ամրագրվածէ նաև առևտրային գաղտնիքի պաշտպանության պահանջը։ ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված չէ առևտրային գաղտնիքի հասկացությունը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանափակվում է հետևյալ ձևակերպմամբ. «Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկտվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության ապահովման համար»: Նման սահմանումը պրակտիկայում հաճախ հակասական մեկնաբանությունների տեղիք է տալիս։

Բնապահպանության նախարարությունը մերժում է տրամադրել տեղեկատվություն այն դեպքում, երբ հարցումը ձևակերպված է ընդհանուր ձևով, խնդրանքն ակնհայտորեն անհիմն է, կամ խնդրանքը վերաբերում է նախապատրաստման գործընթացի մեջ գտնվող նյութերին։

<u>Կետ 5 և 6.</u>

«Տեղեկատվության ազատության մասին» (23.09.2003թ.) ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերի համաձայն, եթե տեղեկատվություն տնօրինողը չունի պահանջվող տեղեկատվությունը կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում արխիվի) գտնվելու վայրը, որը տիրապետում է պահանջվող տեղեկությանը։

Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի պահանջվող տեղեկության վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավարության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկությունը տնօրինողի (այդ թվում արխիվի) գտնվելու վայրը, որն ունի պահանջվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները։

Կետ 7. Տե՛ս կետ 2 - ժամկետների մասին:

Կետ 8. «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» (07.02.2001թ.) ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն անհատույց տրամադրվում են՝

1. վտանգավոր և անբարենպաստ հիդրոօդերևութաբանական կամ հելիոերկրաֆիզիկական երևույթների կանխատեսումների և ահազանգումների վերաբերյալ հույժ շտապ և ընդհանուր նշանակության տեղեկատվությունը, որի ցանկը սահմանում է ՀՀ Կառավարությունը,
2. տվյալներ և տեղեկատվական արտադրանք՝ նախատեսված պետական մարմինների ապահովման համար,
3. հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների տեղեկատվության առկայության և դրանց տրամադրման պայմանների մասին տվյալները:

Սպառողներից, վճար գանձվում է միայն այն ծառայությունների համար, որոնք առնչվում են հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալընդհանուր նշանակության տեղեկատվությունն առանձնացնելու, պատճենահանելու, բազմացնելու, փոստով առաքելու կամ կապի այլ միջոցներով հաղորդելու հետ:

ՀՀ Կառավարության թիվ 349 որոշումը (18.03.2004) պարունակում է հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ ընդհանուր նշանակության հույժ շտապ տեղեկատվության ցանկը:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը /ՀՀ ԱՎԾ/ հրապարակում է և սպառողներին է տրամադրում եռամսյա, կիսամյա և տարեկան վիճակագրական զեկույցներ, վիճակագրական տեղեկագրքեր և տարեգրքեր, բնապահպանական վիճակագրական տարեկան ժողովածու, որոնք զետեղված են նաև ՀՀ ԱՎԾ-ի կայք էջում (www.armstat.am):

«Տեղեկատվության ազատության մասին» (07.02.2001թ.) ՀՀ օրենքի համաձայն վճար չի գանձվում հետևյալ դեպքերում՝

- բանավոր հարցման պատասխանի դեպքում,
- մինչև 10 տպագրական էջ ծավալ ունեցող տեղեկատվության տրամադրման դեպքում,
- ինտերնետի միջոցով տեղեկատվության տրամադրման դեպքում:

Ոչ հավաստի և ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունը ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություններ:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն տրամադրում է տեղեկատվություն անշարժ գույքի, ինչպես նաև հողամասերի մասին, վճարովի հիմունքներով:

ՀՀ օրենսդրության էլեկտրոնային տվյալների բազան՝ «ԻՐՏԵԿԸ», հնարավորություն է տալիս վճարովի հիմունքներով օգտվել ՀՀ իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարանից: Համաշխարհային բանկի և ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ 2005 թվականից առցանց ռեժիմով գործում է Հայաստանի Իրավական Տեղեկատվական համակարգը (www.arlis.am), որն անվճար է և թարմացվում է յուրաքանչյուր

շաբաթ: Էլեկտրոնային աղբյուրների հետ միաժամանակ հրատարակվում է պաշտոնական տեղեկագիրը և գերատեսչական իրավական ակտերի տեղեկագիրը, որտեղ տպագրվում են ՀՀ օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը:

Երևանի քաղաքապետարանում և 12 վարչական շրջաններում դիմումները, հարցումներն ընդունվում են 1 պատուհանի համակարգով, www.iyerevan.am կայքի, սոցիալական կայքերի, <<թեժ գիծ>> ծառայության միջոցով: Պատասխանները տրվում են սահմանված ժամկետում:

ՀՀ բնապահպանության նախարարի 21.01.2005թ. N 17-Ն հրամանով, հաստատվել են «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» (ֆոնդը վարում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը) պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրվող տեղեկատվության համար գանձվող վճարների դրույքաչափերը: Բնապահպանության նախարարությունը գանձում է վճարներ միայն նշված հրամանում նախատեսված տեղեկատվության տրամադրման համար՝ հանրապետական երկրաբանական ֆոնդի մեջ մտնող նյութերի պահպանության նպատակով:

Սույն հրամանի համաձայն հանրային նշանակության կազմակերպությունները ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

VIII. 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 4-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրագործման ժամանակ:

Պատասխան՝

Պետական մարմինները ոչ միշտ են նշում տեղեկատվության տրամադրման մերժման պատճառը. երբեմն խախտվում են տեղեկատվության տրամադրման ժամկետները կամ հարցումը մնում է անպատասխան:

Տեղեկատվության մատչելիության խոչընդոտ հաճախ հանդիսանում է տվյալ տեսակի տեղեկատվության մշակման մենաշնորհը: Անհրաժեշտ է համապատասխան հարաբերությունների իրավական կարգավորման միջոցով ապահովել տվյալ տեսակի տեղեկատվություն մշակողների հասարակական, պետական և առևտրային բաժինների հավասարաչափ և հավասարակշիռ զարգացումը և տեղեկատվության մատչելիության ապահովումը: Մրցակցային պայմանների ստեղծումը կնպաստի տեղեկատվության մատչելիության պայմանների բարելավմանը, և մշակվող տեղեկատվության հավաստիության և որակի բարձրացմանը: Պահնջվող տեղեկատվության ծավալը երբեմն այնքան մեծ է լինում, որ պահանջում է մի քանի աշխատակցի մի քանի օրվա աշխատանք: Հաճախ տեղեկատվության հարցման պատասխանի ուշացումը կամ անպատասխան թողնելը կախված է նաև հարցման ոչ ճիշտ ձևակերպման հետ:

Որոշ դեպքերում պաշտոնատար անձինք չունեն բավարար գիտելիքներ այն մասին, թե ինչ է էկոլոգիական տեղեկատվությունը՝ ելնելով ՕԿ 2-րդ հոդվածի 3-

րդ կետի պահանջներից: Նշված հանգամանքը երբեմն հիմք է հանդիսանում էկոլոգիական տեղեկատվության տրամադրման մերժման համար: Տեղեկատվության տրամադրման վճարները ակնհայտորեն բարձր են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և չեն գործում զեղչեր առանձին (այդ թվում՝ հանրության համար կարևոր) նպատակների համար տեղեկատվության տրամադրման դեպքերում: Այսպես, համայնքային սեփականություն հանդիսացող կանաչ տարածքի կառուցապատմանն առնչվող տեղեկության ստացման համար Երևանի քաղաքապետն ուղղորդում է դեպի ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: 2012 թվականի հունվարի 1-ի §Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջների համաձայն՝ կադաստրային հատակագծերի և քարտեզների տրամադրումը վեկտորային ֆորմատով՝ քաղաքային բնակավայրերի 1 հա տարածքի համար կազմում է՝ 2000 դրամ, գյուղական բնակավայրերի 1 հա տարածքի համար կազմում է՝ 1000 դրամ, բնակավայրից դուրս տարածքներում 1 հա տարածքի համար՝ 200 դրամ: Ինչ վերաբերում է կոմիտեի 23.04.2009թ. N 99-Ն հրամանով սահմանված՝ մինչև 01.01.2012 թվականը գործող կադաստրային քարտեզների թեմատիկ տեղեկատվության տրամադրման համար գանձման ենթակա վճարներին, ապա քանի որ թեմատիկ տեղեկատվությունը հավաքագրվում է ըստ առանձին համայնքների (Երևան քաղաքում՝ վարչական շրջանների) և գործնականում տեխնիկապես իրենից ներկայացնում է բավականին աշխատատար գործընթաց, ուստի թեմատիկ տեղեկատվության տրամադրումը մեկ ամբողջ համայնքի կամ՝ դրա առանձին հատվածների դեպքում մեկ համայնքի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) սահմաններում ընդգրկված տվյալների յուրաքանչյուր համախմբի համար գանձվել է 5000 դրամ: Ներկայումս քննարկվում է §Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ ու լրացումներ իրականացնելու հարցը, որի ընթացքում հնարավոր է անդրադարձ կատարվի նաև վճարման չափերին:

IX. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն 4-րդ հոդվածի տեղեկատվության մատչելիության վերաբերյալ դրույթների իրացման վերաբերյալ, օրինակ՝ կան արդյոք վիճակագրական տվյալներ ներկայացված հարցումների և մերժումների քանակի, ինչպես նաև մերժման հիմքերի վերաբերյալ:
Պատասխան՝ Ներկայացված հարցումների քանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են, քանի որ նման հաշվարկներ դեռևս չեն իրականացվում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»

(18.02.2004թ.) ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթ հարուցելու պահից վարչական մարմինը կազմում է առանձին գործ, որում պահվում են տվյալ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը: Վարչական մարմինը միաժամանակ վարում է վարչական գործերի ժամանակագրական և առարկայական հաշվառման գրանցամատյաններ, ինչպես նաև առանձին գրանցամատյան՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված ակտերի հաշվառման համար:

Վարչական վարույթի վերաբերյալ գործերի և դրանց հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաև վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանում է վարչական մարմինը՝ ՀՀ կառավարության հաստատած օրինակելի կարգի հիման վրա: ՀՀ կառավարությունը հաստատել է նման օրինակելի կարգ, որի հիման վրա էլ ՀՀ բնապահպանության նախարարը ընդունել է նորմատիվ հրաման «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող կարգը» հաստատելու մասին (17.01. 2005թ.,N-13-Ն):

Սակայն այդ գրանցամատյանում առկա տվյալները իրականությունը արտացոլում են միայն տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացման առնչությամբ հարուցված վարչական վարույթների մասով: Նշենք, որ վարչական կարգով ակտերը բողոքարկելու դեպքերը խիստ հազվադեպ են:

Շարունակվում են բարեփոխումներըՕրհուս կենտրոնների և ՈԿԿ-ների միջև էկոլոգիական տեղեկատվության փոխանակման և տարածման ուղղությամբ, ինչը թույլ է տալիս համապատասխան տեղեկատվությունը մոտեցնել հասարակայնությանը: Օրինակ, Երևանի Օրհուս կենտրոնի կողմից մարզային կենտրոններին է ուղարկվում §Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն¦ ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվությունը և այլ էկոլոգիական տեղեկատվություն: Կենտրոնները իրականացնում են շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, բազայավորում, տրամադրում ըստ պահանջի և տարածում շահագրգիռ կողմերի միջև: Էկոլոգիական տեղեկատվությունը հասարակայնությանը տրամադրվում է ըստ պահանջի Օրհուս կենտրոնների ինտերնետային կայքի միջոցով, ինչպես նաև տարածվում է ցանցով, որում ընդգրկված են էկոլոգիական հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների էլ. փոստերի հասցեներ:

X. 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

www.aarhus.am, www.nature.am, www.gov.am., www.armstat.am, www.laws.am, www.parliament.am, www.e-gov.am, www.acts.legalportal.am, www.yerevan.am, www.iyerevan.am, www.elrc.ysu.am:

XI. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական և կարգավորող այլ միջոցները՝ ուղղված էկոլոգիական տեղեկատվության հավաքման և տարածման վերաբերյալ 5-րդ հոդվածի դրույթների իրագործմանը։

Պարզաբանեք, թե ինչ կերպ են իրագործվում 5-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթները։ Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ)։ Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

ա) **1-ին կետի** մասով՝ ձեռնարկված միջոցներն ապահովելու համար, որպեսզի՝

(i) պետական մարմինները տնօրինեն և թարմացնեն էկոլոգիական տեղեկատվությունը,

(ii) ապահովվի տեղեկատվության պատշաճ հոսքը դեպի պետական մարմիններ,

(iii) արտակարգ իրավիճակներում համապատասխան տեղեկատվությունը տարածվի անմիջապես և անհապաղ։

բ) **2-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված պետական մարմինների կողմից էկոլոգիական տեղեկատվությունը հասարակայնությանը մատչելի դարձնելու եղանակների թափանցիկության և էկոլոգիական տեղեկատվության մատչելիության բարելավմանը։

գ) **3-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված հանրային հեռահաղորդակցության ցանցերի միջոցով հասարակայնության համար դյուրամատչելի էլեկտրոնային տվյալների բազաներում էկոլոգիական տեղեկատվության ծավալի աստիճանական ավելացմանը։

դ) **4-րդ կետի** մասով՝ շրջակա միջավայրի վիճակի մասին ազգային զեկուցների հրատարակման և տարածման ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

ե) **5-րդ կետում** հիշատակված տեղեկատվության տարածման ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

զ) **6-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված խրախուսելու

շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող օպերատորներին, որպեսզի վերջիններս հասարակայնությանը պարբերաբար տեղեկացնեն իրենց գործունեության և արտադրանքի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ:

է) **7-րդ կետի** համաձայն պահանջվող տեղեկատվության տրամադրման և հրապարակման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

ը) **8-րդ կետի** մասով՝ հասարակությանն արտադրատեսակների մասին բավարար տեղեկատվության տրամադրման մեխանիզմների մշակման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

թ) **9-րդ կետի** մասով՝ աղտոտիչների կադաստրների կամ ռեգիստրների ազգային համակարգի ստեղծման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

Պատասխան՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (1995թ.) սահմանում է լիազորված մարմնի պարտականությունը (6-րդ հոդ., 3-րդ, 4-րդ կետեր) նախաձեռնող անձի կողմից ծանուցում ստանալուց հետո 7-օրյա ժամկետում իրազեկ պահել ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (02.12.1998թ.) սահմանում է բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումների շարքում վտանգի կամ դրա առաջացման հնարավորության մասին բնակչության իրազեկումը:

ՀՀ ջրային օրենսգրքի (04.06.2002թ.) 20-րդ հոդվածի համաձայն հասարակայնության մասնակցությունը և ծանուցումը կարգավորող պետական կառավարման լիազորված մարմինը պարտավոր է տեղեկացնել հասարակայնությանը հետևյալի մասին՝

- ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագծի,
- ջրի ազգային ծրագրի նախագծի,
- ջրավազանային կառավարման պլանների նախագծերի,
- ջրօգտագործման քննարկվող թույլտվությունների,
- ջրային համակարգերի օգտագործման համար տրվելիք թույլտվությունների,
- ջրերի ստանդարտների նախագծերի,
- ջրերի սակագնային ռազմավարության նախագծի (20-րդ հոդված) մասին:

ՀՀ կառավարություն 07.03.03թ. ընդունել է <<Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերի հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասնի>> N 217-ն որոշումը:

«Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում (07.02.2001թ.) տրվում է հիդրոօդերևութաբանական երևույթների ու պրոցեսների մասին հույժ շտապ տեղեկատվության հասկացությունը՝ տարերային երևույթների և շրջակա միջավայրի աղտոտման վտանգավոր մակարդակների վերաբերյալ փաստացի և կանխատեսվող տեղեկատվություն, որն էլ սահմանված կարգով հաղորդվում է ստանալուց և մշակելուց անմիջապես հետո: Հիդրոօդերևութաբանական գործունեության իրականացման հիմնական սկզբունքներն են հիդրոօդերևութաբանական երևույթների փաստացի և սպասվելիք տվյալների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը, այդ տեղեկատվության հրապարակայնության, հավաստիության և արդյունավետ օգտագործման սկզբունքը:

Այնուհետև, օրենքն ամրագրում է քաղաքացիների, ՈԿԿ-ների և այլ իրավաբանական անձանց կողմից հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացման իրավունքը, ինչպես նաև քաղաքացիների և ՈԿԿ-ների միավորումների՝ հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների անկախ դիտարկումների կատարման իրավունքը՝ հիդրոօդերևութաբանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին տեղեկացնելով տարերային աղետի, վթարների, տեխնոլոգիական պրոցեսների խախտումների մասին, որոնք ազդեցություն են ունեցել կամ կարող են ազդեցություն ունենալ բնակչության կյանքի և առողջության վրա կամ որոնց հետևանքով տեղի է ունեցել շրջակա միջավայրի վտանգավոր աղտոտում (8-րդ հոդված):

13-րդ հոդվածի համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարության լիազորությունների մեջ է մտնում պաշտոնական նախազգուշացումների, կանխատեսումների կամ բնակչության գույքի, առողջության և կյանքի պահպանման ապահովման հետ կապված այլ տեղեկատվության տրամադրումը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (23.09.2003թ.) (հոդված 7) նախատեսում է.

1) տեղեկատվության տնօրինողը հրապարակում է իր կողմից սահմանված տեղեկատվության տրամադրման կարգը, անհապաղ հրապարակում է կամ այլ մեթոդով տեղեկացնում հասարակությանն այն դեպքում, երբ տեղեկատվության հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հասարակության առողջությանը և իրավունքներին, այլ անձանց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, սեփականությանը, անձին սպառնացող վտանգը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի (27.11.2006) 29-րդ հոդվածի համաձայն՝ «Լիազորված պետական մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում՝

1) բնության հատուկ պահպանվող տարածքում նախատեսվող գործունեության մասին,

2) բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության և օգտագործման վերաբերյալ որոշումների մասին,
3) բնության հատուկ պահպանվող տարածքների էկոլոգիական իրավիճակի մասին»:

ՕԿ 3-րդ հոդվածի 9-րդի կետի խտրականության բացառման և Կոնվենցիայի 2 հոդվածի սահմանումների վերբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4-րդ հոդվածի ներքո:

Կետ 1. Բնապահպանական տեղեկատվության պատշաճ հոսքը և նրա թարմացումը ապահովվում է ՀՀ Բնապահպանության նախարարության Տեղեկատվական- վերլուծական կենտրոնի կողմից և կարգավորվում է «ՀՀ Բնապահպանության նախարարության կազմակերպությունների և ստորաբաժանումների կողմից «Տեղեկատվական-վերլուծական կենտրոն» ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրվող տեղեկատվության ցանկի հաստատման մասին» ՀՀ Բնապահպանության նախարարի N 86-Ն 06.04.2004 թ. հրամանով, որի հիմքում ընկած են Օրհուսի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները: Այդ տեղեկատվությունը լուսաբանվում է §Մայրաքաղաք¦ հաղորդաշարի միջոցով:

Տեղեկատվական-վերլուծական կենտրոնը մշակում է ստացված տեղեկատվությունը և տեղադրում Բնապահպանության նախարարության ինտերնետային կայքում: Այնուհետև, ՀՀ Բնապահպանության նախարարության մամլո ծառայության միջոցով նախարարի հետ համաձայնեցնելուց հետո Տեղեկատվական-վերլուծական կենտրոնը տեղադրում է իր վեբ կայքում այն տեղեկատվությունը, որը ենթակա է տարածման: Համաձայն նախարարի հրամանի՝ տեղեկատվությունը թարմացվում է ըստ նորությունների հոսքի, օրինակ՝ ամեն ամիս թարմացվում է ջրային ռեսուրսների և օդային ավազանի վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը: Նորությունների բաժինը թարմացվում է ամեն օր:

Ի կատարումն Օրհուսի կոնվենցիայի (հոդված 4 և 5) տեղեկատվությունը հավաքագրվում և պահպանվում է տեղեկատվական շտեմարաններում, տրամադրվում է հասարակայնությանը ըստ պահանջի և՝ նախարարության պաշտոնական կայքի՝ www.mnp.am միջոցով: Նախարարության պաշտոնական կայքը գործում է դեռևս 2001թ.-ից: 2006 թ. կայքը նորացվել է՝ ընդգրկելով նոր բաժիններ, որոնք բավարարում են տեղեկատվության տրամադրման նոր պահանջներին: 2012թ-ին ՀՀ բնապահպանության նախարարության կայքը կրկին թարմացվել է և այժմ այն ունի որոնման հնարավորություն:

Արդիականացված կայքը ներառում է շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման մասին համապատասխան տեղեկություններ:2007թ. մայիսից www.aarhus.am վերանվանվել է բնապահպանական տեղեկատվության հասարակական /Օրհուս/ կենտրոնների կայք՝ ՀՀ-ում նոր Օրհուս կենտրոնների բացման կապակցությամբ: Ներկայումս Հայաստանում գործում են 14 Օրհուս կենտրոն, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանձին էջը www.aarhus.am կայքում: Բացի վերանվանվելուց նորացվել է կայքի կառուցվածքը և բովանդակությունը:

Ավելացվել են մի շարք բաժիններ: Կայքի Օրհուս կենտրոններ բաժնից հղում է կատարվում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի www.osce.org կայքին և ՀՀ բնապահպանության նախարարության www.mnp.am կայքին, որտեղ տրվում է մանրամասն տեղեկատվություն շրջակա միջավայրի վերաբերյալ: Կայքը թարմացվում է պարբերաբար: Բնապահպանական տեղեկատվության պատշաճ հոսքը և նրա թարմացումը ապահովվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության կապերի ու բնապահպանության վարչությունների կողմից:

Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջի խմբագրությունը մշակում է ստացված տեղեկատվությունը և տեղադրում է քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ համապատասխան բաժնում և պաշտոնական լրահոսում:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացրեց իր կայք էջը: Կայքի ծրագրային լուծումները և մշակված սկզբունքները թույլ են տալիս այն դարձնել դինամիկ ռեսուրս, որը օգտվողներին կիրազեկի էկոլոգիական իրավունքի գիտության, օրենսդրության և պրակտիկայի զարգացումներին: Կայքի կառուցվածքը և բովանդակությունը այն օգտակար են դարձնում ինչպես որոշում կայացնողների և քաղաքացիական հասարկության համար, այլ նաև ուսանողների և ոլորտի հետազոտողների համար:

Կայքի կառուցվածքի երեք հիմնական բաղադրիչներն են 1. մարդու էկոլոգիական իրավունքների և էկոլոգիական օրենսդրության զարգացման արդի միտումները, 2. Էկո-իրավունքի կենտրոնի գործունեությունը, 3. ընդհանուր տեղեկատվություն բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ:

Կայքը բաղկացած է 8 բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը ունի ենթաբաժիններ: Ուշադրության է արժանի §Օրենսդրության գնահատում¦ բաժինը: Սույն բաժնում տեղ են գտել ԷԻԳԿ-ի կողմից օրենքի նախագծերի վերաբերյալ արված դիտողություններ և առաջարկներ:

§Հանրային լսումներ և քննարկումներ բաժին¦–ը տեղեկություններ է պարունակում էկոլոգիական օրենսդրուևթյան արդի հիմանխնդիրների և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների և լսումների մասին:

ՀՀ կառավարությունը 04.03.2004 ընդունել է N-333-Ն որոշում «ՀՀ պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին», ի կատարումն որի ՀՀ բնապահպանության նախարարը 14.05.2004 ընդունել է N-119–Ն հրամանը, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունում լրագրողների հավատարմագրման կարգը: Համաձայն նշված կարգի Բնապահպանության նախարարությունը ոչ ուշ, քան յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ հավատարմագրված լրագրողներին տրամադրում է համառոտ տեղեկագիր նախարարության գործունեության արդյունքների մասին: Սույն որոշման 3 կետը սահմանում է երաշխիքներ լրագրողների անկախ գործունեության համար:

Միաժամանակ, նման տեղեկատվություն է տրամադրվում Օրհուս կենտրոններին, որպեսզի դրա հետ կարողանան ծանոթանալ շահագրգիռ

հասարակայնության ավելի լայն շրջանակները:

Հայաստանում բնապահպանական տեղեկատվության տարածումն արտակարգ իրավիճակներում իրականացվում է Բնապահպանության նախարարության, , Արտակարգ իրավիճակների նախարարության, որտեղ ներկայումս ներառված է նաև Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, Առողջապահության նախարարության, Գյուղատնտեսության նախարարության, քաղաքապետարանի և Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից՝ հնարավորինս բոլոր ԶԼՄ-ների օգտագործման միջոցով:

Այսպիսի տեղեկատվությունը, մասնավորապես, կարող է պարունակել անվտանգության միջոցառումների վերաբերյալ խորհուրդներ, վտանգի զարգացման գործընթացի կանխատեսում, հետազոտության արդյունքներ, վտանգի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների կամ նախազգուշական միջոցառումների մասին հաշվետվություններ և այլն:

Պետական կառավարման մարմիններում վարչական վիճակագրական ռեգիստրների ձևավորման ու վարման նպատակով տեղեկատվության հավաքագրման, տրամադրման, հրապարակման իրավասություններն սահմանված են նաև «Պետական վիճակագրության մասին» (28.04.2000թ.) ՀՀ օրենքով (17-րդ հոդված) և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ) կողմից հաստատված մի շարք կանոնակարգերով: Տեղեկույթի բովանդակությունը, տրամադրման և փոխանակման մեխանիզմներն ու գործիքները սահմնավում են վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով, որը բաց քննարկումներից հետո հաստատվում է ՀՀ ՎՊԽ կողմից և ստանում նորմատիվային փաստաթղթի կարգավիճակ:

Բնապահպանական տեղեկատվության ամբողջականացման, միջազգային համադրելիության ապահովման, վիճակագրական տեղեկատվություն սպառողների անհրաժեշտ և հավաստի տեղեկատվության տրամադրման յուրաժամանակայնության /օպերատիվության/ բարձրացման նպատակով հանրապետությունում շարունակվում են աշխատանքները միասնական տեղեկատվական բազաների ձևավորման ուղղությամբ: ՄԱԿ-ի Եվրամիության հարևանության և համագործակցության քաղաքականության գործիքների շրջանակում §Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգ¦/ԵՀՀՔ-ԷՏՄՀ, ENPI-SEIS/ նախագծի շրջանակում իրականացվող աշխատանքի հիմնական նպատակն է ԷՏՄՀ-ի սկզբունքներին համապատասխան էկոտեղեկատվական համակարգերի ձևավորման, միասնական մեթոդաբանությամբ պայմանվորված կառավարման, բովանդակային, ենթակառուցվածքային և սպասարկման բաղադրիչների ձևավորումը և զարգացումը: Արդյունքում ձևավորվող վիճակագրական տեղեկատվական բազաներում ընդգրկվելու են ԵՄ բնապահպանության և վիճակագրության ստորաբաժանումների կողմից ձևավորված §Շրջակա միջավայրի գնահատման և մոնիտորինգի¦ միասնական աշխատանքային խմբի կողմից մշակվող, ինչպես նաև ազգային մակարդակով սահմանված ցուցանիշները /ինդիկատորները/: Այդ աշխատանքներին մասնակցում են ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ ԲՆ-ի պատասխանատու աշխատակիցներ:

«Տեղեկատվության ազատության մասին» (23.09.2003թ.) ՀՀ օրենքը (հոդ. 7)

նախատեսում է. «1. Տեղեկատվության տնօրինողն ըստ օրենքով սահմանված կարգի մշակում և հրապարակում է իր կողմից հաստատված տեղեկատվության տրամադրման կարգը. կախված իր գտնվելու վայրից այն տեղադրում է բոլորի համար տեսանելի տեղում:

2. Անհապաղ հրապարակում է կամ այլ մեթոդով տեղեկացնում է հասարակությանն իր տրամադրության տակ գտնվող տեղեկատվության մասին, որի հրապարակումը կարող է կանխել այն վտանգը, որը սպառնում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հասարակության առողջությանը և իրավունքներին, այլ անձանց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, սեփականությանն, անձին»:

Շրջակա միջավայրին վերաբերող տեղկատվության պատշաճ հոսքի և թարմացման առումով կարևոր ենք համարում 09.04.2007թ. ընդունված «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ օրենքը, որի երրորդ հոդվածի համաձայն՝ «Օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, տեղեկատվությունը պարունակող հայտարարությունը պետք է տեղադրվի նաև (www.lraber.am) հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Կայքը դեռևս չի գործում:

UNDP-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Ինստիտուցիոնալ և իրավական հզորությունների ստեղծում գլոբալ բնապահպանական կառավարման նպատակով» ծրագրի շրջանակներում փաթեթային տարբերակով մշակվում են ՀՀ բնառեսուրսային օրենսդրության փոփոխությունների նախագծեր, որոնց նպատակն է միասնականացնել ՀՀ էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպման և իրականացման պահանջները՝ դրանով իսկ բարելավելով ինչպես պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքի ապահովումը, այնպես էլ յուրաքանչյուրի՝ էկոլոգիական տեղեկատվություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացումը: 2012թ-ից մեկնարկել է ծրագրի հաջորդ փուլը, որն իրականացվում է GIZ-ի աջակցությամբ: Նախատեսվում է 2014թ-ի դեկտեմբերին շրջանառության մեջ դնել §Շրջակա միջավայրի մասին¦ ՀՀ օրենքի նախագիծը, որը կկարգավորի էկոլոգիական տեղեկատվության հոսքերի կառավարման հարաբերությունները և կամրագրի էկոլոգիական թույլտվությունների տրամադրման միասնական ընթացակարգ:

www.aarhus.am կայքի «Օրենսդրություն» բաժնից հղում է կատարվում www.parliament.am կայքի բնապահպանական օրենսդրություն բաժնին:

Արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն ամեն օր թարմ տեղեկատվություն է ներկայացնում հանրապետությունում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների մասին իր ինտերնետային կայքի միջոցով՝ համապատասխան տեղեկատվությունը տրամադրելով նաև լրատվամիջոցներին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

Հրատարակվում է «Արտակարգ թերթ» շաբաթաթերթը, որը կարևոր նշանակություն ունի բնական և տեխնածին աղետների տարաբնույթ հետևանքներին դիմակայելու՝ բնակչության ու կառավարման մարմինների պատրաստվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: ՀՀ արտակարգ

իրավիճակների նախարարության կողմից պատրաստվում են տեսաֆիլմեր, տեսահոլովակներ, ռադիոհաղորդումներ: Տպագրվում են գրքույկներ, բրոշյուրներ, պաստառներ, նաև երեխաներին հասցեագրված դիդակտիկ նյութեր: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ինտերնետային հասցեն է www.mes.am:

ՀՀ կառավարության կողմից ընդունվել է որոշում §Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին¦ (30.08.2007թ. N 1044-Ն), որով սահմանվել է բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը, որի 18-րդ և 19-րդ կետերի համաձայան՝ «Լիազորված պետական մարմինն ապահովում է մոնիթորինգի տվյալների մուտքագրումը, դասակարգումը, վերլուծությունը, պարբերական թարմացումը և հասարակայնության համար տեղեկատվության մատչելիությունը: Մուտքագրված տվյալները վերլուծվում և գնահատվում են մուտքագրման օրվանից մինչև 20 օրվա ընթացքում, որից հետո տեղադրվում են համապատասխան վեբ-կայքում»:

<u>Կետ 2.</u> Միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ Բնապահպանության նախարարությունը և ՈԿԿ-ները հրատարակել են 2 տեղեկագրքեր բնապահպանական տեղեկատվություն տնօրինողների մասին:

<u>Կետ 3.</u> Տես 5-րդ հոդվածի 1-ին կետը ՀՀ Բնապահպանության նախարարության «Տեղեկատվական-վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ մասին (www.mnp.am):

<u>Կետ 4.</u> Շրջակա միջավայրի վիճակի մասին ազգային զեկույցները հրապարակվում և տարածվում են Բնապահպանության նախարարության կողմից, ինչպես նաև տեղադրվում Բնապահպանության նախարարության վեբ կայքում: 2011թ. հրապարակվել է Շրջակա միջավայրի վիճակի մասին Նախարարական զեկույցը, որը վերաբերում է 2007-2011թթ. ընթացքում կատարված աշխատանքներին, խնդիրներին և ձեռքբերումներին: 2012թ-ին մշակվել է Ռիո+20 ազգային գնահատման զեկույցը: Նշված զեկույցը պատրաստվել է հասարակության ակտիվ ներգրավմամբ:

<u>Կետ 5.</u> «Իրավական ակտերի մասին» (03.04.2002թ.) ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի որոշումները, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները դրանք ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»: ՀՀ միջազգային պայմանագրերը հրապարակվում և հրատարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» առաջին բաժնում: Գերատեսչական նորմատիվ ակտերը՝ դրանք ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի

Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»:

Մասնագիտացված ՈԿԿ-ների կողմից լայնորեն կիրառվում է ոչ պաշտոնական հրատարակությունների փորձը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (2002 թ.) սահմանում է հասարակության իրազեկումն ընդունվող իրավական ակտերի մասին պաշտոնական հաղորդագրությունների, մամլո ասուլիսների, ԶԼՄ-ների, հարցազրույցների, հոդվածների և տեղեկատվության հրապարակման, հեռուստա- ռադիոելույթների միջոցով: Հասարակությունն իրազեկվում է նորմատիվ ակտերի էության, նրանց կիրառման և ուժի մեջ մտնելու առանձնահատկությունների, ժամկետների, կարգի և այլնի մասին: Ստեղծված է ԻՐՏԵԿ համակարգը, որը ՀՀ-ում գործող նորմատիվ-իրավական ակտերի մասին տվյալների էլեկտրոնային-տեղեկատվական բազա է:

Համաշխարհային բանկի, EU TACIS, GEF, UNDP, USAID, ԵԱՀԿ և այլ կազմակերպությունների աջակցությամբ մշակվել են շրջակա միջավայրի պահպանման գործողությունների Ազգային պլաններ (NEAP, NEHAP), շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլաններ մի շարք քաղաքների համար /LEAPs/, ջրային ռեսուրսների պահպանման և օգտագործման, կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, անապատացման դեմ պայքարի ոլորտներում քաղաքականության հիմունքներ:

Ստորագրված միջազգային պայմանագրերի մասին տեղեկատվությունը մատչելի է ՀՀ բնապահպանության նախարարության, Ազգային Ժողովի վեբ-կայքերում, ինչպես նաև Օրհուս կենտրոններում:

2004 թ. ԵՄ ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակներում, տեղական պիլոտային նախագծի իրականացման արդյունքում հասարակության մասնակցությամբ պատրաստվել և Հրազդան քաղաքի քաղաքապետի որոշմամբ ընդունվել է «Բնապահպանական նշանակության որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության Կարգը»: Ընթացակարգը մանրամասնորեն կանոնակարգում է, թե ինչպես պետք է իրազեկել հասարակությանը որոշման նախագծի պատրաստման վաղ փուլերում, նկարագրում է հասարակության մասնակցության տարբեր ձևեր և մեթոդներ (վաղ փուլում ԶԼՄ-ների միջոցով իրազեկում, պատասխանատու անձանց հետ հարցազրույցներ, հարցումներ, աշխատանքային խմբերում, կլոր սեղաններին և հասարակական լսումներին, գրավոր մեկնաբանությունների ներկայացմանը հասարակության ներգրավում և այլն):

ՀՀ բնապահպանության նախարարի թիվ 195-Ա, 30.08.2013թ հրամանով հաստավել են §ՀՀ արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի ձևավորման մեթոդական ուղեցույցը¦ և §ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման մոդելների ներդրման մեթոդական ուղեցույցը¦, որոնք ունեն հասարակայնության մասնակցության և բնապահպանական տեղեկատվության ապահովման հանձնարարականներ:Այս բոլոր մեխանիզմները փորձարկվել են գործնականում, իսկ տեղական իշխանության մարմինների և հասարակության ներկայացուցիչների համար անցկացվել են ուսուցումներ ՕԿ-ի դրույթների վերաբերյալ:

Հատուկ բաժին է նվիրված վերջնական որոշման ընդունման ժամանակ քաղաքացիների կարծիքներն ու առաջարկները հաշվի առնելու մեխանիզմին:

<u>Կետ 6.</u> ՀՀ-ում օրենսդրական մակարդակով բացակայում են այնպիսի

մեխանիզմներ, որոնք կարող են խրախուսել՝ շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն գործող օպերատորներին՝ հասարակությանը պարբերաբար իրազեկել իրենց գործունեության և արտադրատեսակների շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության մասին։ Հայեցողական բնույթի նման հնարավորություն սահմանում է §Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին¦ ՀՀ օրենքը։

Կետ 7. ՀՀ Բնապահպանության նախարարությունը հրապարակում է տեղեկատվություն և վերլուծություն կենսաբազմազանության, անտառների պահպանության և այլ բնապահպանական խնդիրների վերաբերյալ։ Անտառների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրվում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կազմում գործող «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (www.hayantar.am)։

Պետական մարմինները ՈԿԿ-ների հետ համատեղ պարբերաբար կազմակերպում են կլոր սեղաններ, սեմինարներ, մամլո ասուլիսներ ՁԼՄ-ների համար և օրենքի նախագծերի հասարակական լսումներ։

Կետ 8. Հայաստանում սննդամթերքի որակի մասին տեղեկատվության հարցերով զբաղվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, մասնավորապես՝ Ստանդարտների ազգային ինստիտուտը։ Բացի այդ, շատ առևտրային կազմակերպություններ ստացել են արտադրանքի միջազգային հավաստագրման իրավունք, օրինակ՝ Դեղորայքների և բժշկական տեխնոլոգիաների գործակալությունը։ Այս ոլորտում առանցքային դերակատարություն ունի նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, որը ստեղծվել է 2011է-ին։

Ինչ վերաբերում է գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին, ներկայումս ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունում քննարկվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» (27.11.2006թ.) ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների փաթեթը, որում, մասնավորապես, նախատեսված է ԳՁՕ և ԳՁ-մթերքների պիտակավորումը. քննարկվում են «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» (26.06.2001թ.) ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունները։

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում նախատեսված փոփոխությունները այդպես էլ չեն իրականացվել և գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին վերաբերող ոլորտը շարունակում է դուրս մնալ իրավական կարգավորման շրջանակներից, իսկ հասարակության իրազեկման մակարդակը բավականին ցածր է։ Բնապահպաության նախարարության կողմից մշակվել է §Գենետիկորեն ձևափոխված օգանիզմների գործածության կենսանվտանգության մասին¦ ՀՀ օրենքի նախագիծ։ Նախագիծը ներկայացվել է Ազգային Ժողովի քննարկմանը։ Օրենքի նախագծում հղումներ են կատարվում ենթաօրենսդրական ակտերին, որոնք ենթադրաբար պետք է ընդունվեն Օրենքի ընդունումից հետո>>։ Վերջին տարիներին որոշ ՈԿԿ-ներ աշխատում են էկոլոգիական պիտակավորման կամավոր համակարգերի մշակման և ներմուծման ուղղությամբ (օրինակ՝ մշակվել է էկոլոգիական, գյուղատնտեսական արտադրանքի համար ապրանքանիշ)։

ՀՀ կառավարության մի շարք որոշումներով հաստատվել են սննդամթերքի հետ շփվող նյութերին և դրանց հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին և բովանդակությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (25.10.2007թ. N1282-Ն), ՀՀ ներմուծվող սննդամթերքի ու սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները (21.12.2006թ. N1838-Ն), Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մշակման և պիտակավորման կարգը (19.03.2009թ. N283-Ն), Օրգանական գյուղատնտեսության կազմակերպման, բույսերի և բուսական ծագման մթերքի (ներառյալ մեղվաբուծական մթերքը) արտադրության, օրգանական եղանակով վերամշակման, փաթեթավորման, պահպանման, փոխադրման, իրացման և մակնշման կարգը (11.06.2009թ. N662-Ն):

<u>Կետ 9.</u> Հայաստանի Հանրապետությունն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին» արձանագրության տեքստի պատրաստման գործընթացին. 2003 թ. մայիսին ՀՀ Կառավարությունը ստորագրել է ԱԱՏՌ-ի մասին արձանագրությունը: 2002-2004 թթ. ընթացքում պատրաստվել են 3 նախագծեր հասարակության համար ռեգիստրների ստեղծման և ԱԱՏՌ-ի մասին ազգային կամ տարածաշրջանային սեմինարների անցկացման հնարավորությունների ուսումնասիրման վերաբերյալ,որոնք ներկայացվել են Օրհուսի Կոնվենցիայի Քարտուղարություն և այլ միջազգային կազմակերպություններ՝ ֆինանսավորման համար:

Արձանագրության տեքստը թարգմանվել է ազգային լեզվով: ԵՄ ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակներում առաջին անգամ հրատարակվել է ԱԱՏՌ-ի մասին արձանագրության տեքստը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, մեկնաբանություններով: Հայաստանում անցկացվել են դասընթացներ և քննարկումներ Արձանագրության դրույթների կատարման վերաբերյալ:

Արձանագրության վավերացման գործընթացն արագացնելու, ներուժի և մեթոդոլոգիայի մշակման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ԱԱՏՌ արձանագրության հիմնական դրույթներն ընդգրկվել են §Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին¦ ՀՀ օրենքի նախագծում, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով՝ 3-րդ ընթերցման համար:
2. 2010թ. Հայաստանի §Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն¦ ՀԿ-ն ներկայացուցիչն ընտրվել է Արձանագրության Իրականացման Կոմիտեի կազմում՝ 8 տարի ժամկետով:
3. Մշակվել են համապատասխան նյութեր հետագայում ինտերակտիվ դասընթացներ կազմակերպելու համար:

4. 2012 թվականի նոյեմբերին Ժնևում կայացավ ՄԱԿ ԵՍՀ ԱԱՏՌ Արձանագրության աշխատանքային խմբի հերթական նիստը: Հանդիպման ժամանակ Բելառուսը և Հայաստանը մանդատ են ստացել՝ ԱԵԿԿԱ 12 երկրների համար տեխնիկական աջակցության փաստաթուղթ պատրաստելու համար: Պահանջվող փաստաթուղթը պատրաստվել է և 2013թ. օգոստոս ամսին ներկայացվել կոնվենցիայի քարտուղարություն՝ աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը այն քննարկելու նպատակով:

Միաժամանակ Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել և զարգացնել հզորություններ հետևյալ ուղղությամբ/ համակարգչային ծրագրի տեղայնացում և տեղադրում, տեխնիկական հզորությունների զարգացում ձեռնարկություններում, ուսումնասիրելով միջազգային փորձը մշակել մեթոդաբանություն դիֆուզիոն աղբյուրներից արտանետումները հաշվարկելու համար, հստակեցնել պետական լիազոր մարմինը, իրականացնել իրավական ակտերի մշակում, հզորությունների ստեղծում, արտանետումների չափման և հաշվարկների մեթոդաբանության մշակում և այլն/:

ՀՀ բնապահպանության նախարարությունը ՄԱԿ-ի Ուսուցման և հետազոտման ինստիտուտի (UNITAR) հետ համատեղ իրականացրել է §Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ազգային ռեգիստրների ձևավորում՝ Հայաստանում Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման համար ներուժի ամրապնդման նպատակով¦ ծրագիր:

Ելնելով ազգային գերակայություններից և առաջադրված կոնկրետ խնդիրներից, որոնք ընդգրկված են Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրում, առաջարկվել է ԱԱՏՌ ազգային համակարգում առաջին հերթին ներառել նյութեր կայուն օրգանական աղտոտիչների /ԿՕԱ/ խմբից և ընդգրկել տվյալներ քիմիական նյութերի արտանետման վերաբերյալ արդյունաբերության այն ճյուղերից, որոնք գերակա են համարվում ԿՕԱ արտանետումների աղբյուր հանդիսացող տեսանկյունից:

XII. 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԱԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 5-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրագործման ժամանակ:

Պատասխան՝

ՕԿ-ով նախատեսված իրենց պարտավորությունների մասին պետական ծառայողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը, օրենսդրության կատարելագործման անհրաժեշտությունը, անբավարար տեխնիկական հագեցվածությունը,

XIII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն էկոլոգիական տեղեկատվության հավաքմանը և տարածմանն առնչվող 5-րդ հոդվածի դրույթների իրացման վերաբերյալ, օրինակ՝ կան արդյոք վիճակագրական տվյալներ հրապարակվող տեղեկատվության վերաբերյալ:

Պատասխան՝

Շրջակա միջավայրին վերաբերող հարցերի վերաբերյալ տպագրված նյութերի մասին տվյալների մետաբազա կարելի է գտնել ՀՀ Բնապահպանության նախարարության վեբ կայքում, ինչպես նաև Օրհուս կենտրոններում:Բնապահպանության նախարարության Տեղեկատվական-վերլուծական կենտրոնը հրապարակում է §Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն¦ ՊՈԱԿ-ի կողմից տպագրվող ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին ամենաամսյա մոնիտորինգային տվյալները: Շրջակա միջավայրի վիճակի մասին մոնիտորինգային տվյալները տեղեկանքների տեսքով, word և pdf ֆորմատով հասարակության համար հասանելի են ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքի §Շրջակա միջավայր¦ բաժնում, ինչպես նաև մոնիտորինգի կենտրոնի կայքում՝ www.armmonitoring.am:

«Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ-ն նախաձեռնել է ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ հանրային հեռուստատեսությամբ կազմակերպել «Բնապահպանի ժամանակ» ծրագիրը, որը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չի իրականացվել և ընդգրկվել է 2014 թվականի աշխատանքների ծրագրում:

ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքի «Վերջին նորություններ» բաժնում օպերատիվ կարգով տեղադրվում են պաշտոնական հաղորդագրություններ շրջակա միջավայրի հիմնախնդիրների հետ կապված հարցերի վերաբերյալ, ինչպես նաև շրջակա միջավայրի բացասական գործոնների դեմ պայքարի և իրականացվող միջոցառումների հետ կապված նորությունները /օրինակ՝ ծխախոտի դեմ պայքարի, տուբերկուլյոզի դեմ պայքարի և այլն/: Նշված տեղեկատվություն բնակչությանը ներկայացվում է նաև մամլո ասուլիսների, ԶԼՄ-ների, հարցազրույցների, հոդվածների և տեղեկատվության հրապարակման, հեռուստա- ռադիոելույթների միջոցով:

ՀՀ առողջապահության նախարարությունը չի հավաքագրում և տարածում վիճակագրական տեղեկատվություն էկոլոգիական գործոններով պայմանավորված հիվանդացությունների վերաբերյալ:

XIV. 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

www.aarhus.am, www.gov.am, www.mnp.am, www.nature.am, , www.laws.am, www.parliament.am, , www.mes.am, www.e-gov.am, elrc.ysu.am, www.acts.legalportal.am, www.mta.gov.am:

XV. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական և կարգավորող այլ միջոցները՝ ուղղված գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ հոդված 6-ի դրույթների իրագործմանը, որոնք վերաբերում են գործունեության կոնկրետ ձևերի վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցությանը։

Պարզաբանեք, թե ինչ կերպ են իրագործվում 6-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթները։ Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ)։ Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

ա) **1-ին կետի** մասով ձեռնարկված միջոցները, որոնք ապահովում են.

(i) Կոնվենցիայի հավելված 1-ում նշված նախատեսվող գործունեության տեսակները թույլատրելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս 6-րդ հոդվածի դրույթների կիրառումը։

(ii) Կոնվենցիայի հավելված 1-ում չնշված, բայց շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող գործունեության տեսակները թույլատրելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս 6-րդ հոդվածի դրույթների կիրառումը։

բ) շրջակա միջավայրին վերաբերող որոշումների ընդունման ընթացակարգի սկզբնական փուլում **2-րդ կետում** նշված հարցերի վերաբերյալ շահագրգիռ հասարակայնության ժամանակին, պատշաճ և արդյունավետ ձևով իրազեկումն ապահովելու համար ձեռնարկված միջոցները։

գ) ձեռնարկված միջոցները այն նպատակով, որպեսզի հասարակայնության մասնակցության ընթացակարգերի համար նախատեսված ժամկետները համապատասխանեն **3-րդ կետի** պահանջներին։

դ) **4-րդ կետի** մասով՝ վաղ փուլում հասարակայնության մասնակցությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

ե) **5-րդ կետի** մասով՝ ապագա նախաձեռնողներին խրախուսելուն ուղղված միջոցները, որպեսզի նրանք նախքան թույլատվություն ստանալու հայտ ներկայացնելը որոշեն շահագրգիռ հասարակայնության շրջանակը, անցկացնեն քննարկումներ և տրամադրեն տեղեկատվություն իրենց հայտի նպատակների

վերաբերյալ։

զ) **6-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցներն՝ ուղղված նրան, որպեսզի.

1. իրավասու պետական մարմինները շահագրգիռ հասարակայնությանը տրամադրեն 6-րդ հոդվածում նշված ողջ տեղեկատվությունը, որն առնչվում է որոշումների կայացմանը,

2. մասնավորապես, իրավասու մարմինները շահագրգիռ հասարակայնությանը տրամադրեն սույն կետում նշված տեղեկատվությունը։

է) **7-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները ապահովելու համար, որ հասարակայնության մասնակցության ընթացակարգերը հնարավորություն ընձեռեն հասարակայնությանը ներկայացնելու մեկնաբանություններ, տեղեկատվություն, վերլուծություն կամ կարծիքներ, որոնք վերաբերում են նախատեսվող գործունեությանը։

ը) **8-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցներն ապահովելու համար համապատասխան որոշման մեջ հասարակայնության մասնակցության արդյունքների՝ պատշաճ ձևով արտացոլումը։

թ) **9-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի հասարակայնությունը, ըստ համապատասխան ընթացակարգերի, պատշաճ ձևով իրազեկվի որոշման մասին։

ժ) **10-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի այն դեպքերում, երբ պետական մարմինը վերանայում կամ թարմացնում է 1-ին կետում նշված գործունեության իրականացման պայմանները, 2-9-րդ կետերի դրույթներն անհրաժեշտության դեպքում կիրառվեն համապատասխան փոփոխություններ կատարելիս։

ի) **11-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված գենետիկորեն փոփոխված օրգանիզմները շրջակա միջավայր դիտավորյալ բացթողնման թույլտվությունների տրման հետ առնչվող որոշումների նկատմամբ 6-րդ հոդվածի դրույթների կիրառումն ապահովելուն։

Պատասխան՝

1995 թ. ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները։ Այս օրենքը սահմանում է նախատեսվող գործունեության տեսակների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները։

Օրենքում կիրառվում են սահմանումներ, որոնք չեն համապատասխանում Օրհուսի Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին։ Օրինակ՝

«շահագրգիռ հասարակայնություն» հասկացության սահմանումը։

Օրենքի համաձայն՝ նախատեսվող գործունեության դեպքում, որը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա (օրենքը սահմանում է փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության ցանկը), լիազորված մարմինները պետք է սահմանված կարգով իրազեկեն հասարակությանը և անցկացնեն հասարակական լսումներ։ Սակայն երբեմն նախագծի փորձաքննությունն իրականացվում է այն ժամանակ, երբ նախաձեռնությունն արդեն իրականացվում է, և հասարակական լսումների անցկացումը կրում է ձևական բնույթ կամ այդպիսի լսումներ ընդհանրապես են անցկացվում։ Վերջին տարիներին այս հարցում էական դրական փոփոխություններ չեն գրանցվել. հաճախ հասարակությունը տեղեկացվում է, անցկացվում են հասարակական լսումներ, և այս գործընթացին ներգրավվում են ՈԿԿ-ներ, որոնք համապատասխանում են ՕԿ-ի 2-րդ հոդվածի 5-րդ կետի «շահագրգիռ հասարակայնություն» սահմանմանը։ Շարունակվում է խնդրահարույց մնալ շահագրգիռ հասարակության կարծիքները պատշաճ ձևով հաշվի առնելու հարցը։

Նշված օրենքի համաձայն՝ «Փորձաքննության փաստաթղթերի հրապարակումը և քննարկումը սահմանափակվում է պետական, արտադրական և առևտրային գաղտնիքների հետ կապված և կարգավորվում է երկրի օրենսդրությամբ։ Եթե ծրագրվող գործունեությունը վերաբերում է պետության պաշտպանությանը, լիազորված մարմինը (11-րդ հոդված, կետ 7), հիմնվելով ՀՀ օրենսդրության վրա, պարտավոր է տալ փորձագիտական եզրակացություն՝ այն համապատասխան մարմինների հետ քննարկելուց հետո։

Դեռևս շարունակում է գործել ՀՀ Կառավարության 1999 թ. մարտի 30-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» որոշումը։

Գործող Օրենքի մի շարք դրույթներ չեն համապատասխանում Կոնվենցիայի 4, 5 և 6-րդ հոդվածների պահանջներին։ Սակայն կոնկրետ հարցերի կապակցությամբ որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության դեպքերի թիվը աճել է։ ՕԿ Կողմերի 4-րդ հանդիպումը հաստատել է Համապատասխանության Կոմիտեի եզրակացությունը, որը վերաբերում էր Թեղուտի մոլիբդենային հանքավայրի շահագորան համար փորձաքննության գործընթացում հասարակայնության մասնակցության որոշ պահանջների խախտմանը։ Կողմերի հանդիպման IV/9a որոշմամբ ամրագրված առաջարկությունները կյանքի կոչելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության մշակվել է §Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին¦ ՀՀ օրենքի նախագիծ, որի մշակմանը մասնակցել են նաև ՈԿԿ-ների ներկայացուցիչներ, ովքեր ընդգրկված են նախագծի մշակման աշխատանքներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի կազմում։ Նախագիծը գտնվում է ԱԺ-ում, որը 2013թ-ի սեպտեմբերի 23ին քննարկվել է գյուղատնտեսական և բնապահպանական հարցերով հանձնաժողովի նիստում։

Հանձնաժողովի նիստում քննարկվելուց հետո նախագիծ անցնելու է

քննարկման փուլ, լինելու են հանրային և պառլամենտական լսումներ նախագծի բարելավման նպատակով՝ ելնելով Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ ACCC/C/2004/8 և ACCC/C/2009/43 հաղորդագրությունների վերաբերյալ ընդունած III/6b և IV/9a որոշման դրույթները դրանում արտացոլելու անհրաժեշտությունից:

Առաջին և հիմնական փոփոխություններից մեկը, որ տեղ է գտել նախագծում՝ փորձաքննության ենթակա գործունեության տեսակների ցանկի վերանայումն է և գործունեության տեսակների դասակարգումն է ըստ բնագավառների և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանի: Նախագծում ներառվել են նաև գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանային հզորությունները: Նախատեսվում է փորձաքննությունը դարձնել փուլային գործընթաց՝ դրա մեջ ներառելով երկու փուլ՝ նախնական և հիմնական: Ի տարբերություն գործող օրենքի՝ փոփոխությունների նախագծում ամրագրվել են նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և անհրաժեշտ փաստաթղթերի շրջանակը և բովանդակության վերաբերյալ պահանջները: Որոշակիորեն հստակեցվել են նաև փորձաքննության անցկացման ժամկետները և ծանուցման կարգը: Առանձնահատուկ կարգավորման են ենթարկվել անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեությունների փորձաքննության անցկացման կարգը: Անդրսահմանային ազդեցությանը վերաբերող հարցերի կարգավորումն ուղղակիորեն արտացոլում է Էսպո կոնվենցիայի պահանջները:

ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածը նույնպես վերաբերում է նշված խնդրին (տես 5-րդ հոդված):

ՀՀ տասնչորս քաղաքներում 2002-2013թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համագործակցության արդյունքում ստեղծվել են թվով 15 Օրհուս կենտրոններ, որոնց գործունեության հիմնական նպատակն Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնասյուների իրականացմանն աջակցելն է:

<u>Կետ 2 և 3.</u> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» (20.11.1995թ.) ՀՀ օրենքը նախատեսում է հասարակության ներգրավումը փորձաքննության գործընթացի նախնական՝ ծանուցման փուլում:

Փորձաքննության ենթակա որևէ գործունեություն չի կարող իրականացվել առանց դրական փորձաքննական եզրակացության: Հասարակությունը պետք է ներգրավվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացին հենց սկզբից: 10-օրյա ժամկետում ազդակիր համայնքի ղեկավարները պետք է լիազորված մարմնին ներկայացնեն իրենց և հասարակական կարծիքը:

Կետ 5. Սույն <u>կետի</u> առնչությամբ հարցն օրենսդրորեն կարգավորված չէ, սակայն բնապահպանական ծրագրերի առաջադրման և նախագծերի

համաձայնեցման փուլում սկսել է կարևորվել այս ուղղությամբ հանրային մասնակցությունն ու հանրային շահագրգռվածությունը խթանելը՝ ապագա կոնֆլիկտներից խուսափելու նպատակով նաև:

Կետ 6. Օրենսդրորեն լիարժեք կարգավորված չէ իրավասու պետական մարմինների կողմից շահագրգիռ հասարակայնությանը որոշումների ընդունման գործընթացին վերաբերող ողջ տեղեկատվության տրամադրման ընթացակարգը ։

Կետ 7.

Հասարակական լսումներից հետո մասնագիտական եզրակացության և հասարակական լսումների արձանագրության հիման վրա լիազորված մարմինը (ներկայումս՝ ՀՀ Բնապահպանության նախարարությունը) որոշում է ընդունում դրական կամ բացասական փորձագիտական եզրակացություն տալու մասին:

Կետ 8. Օրենքը չի կարգավորում հասարակական կարծիքի արդյունքների ամրագրման կարգը: Սակայն հասարակական լսումների արդյունքներն ամրագրվում են համապատասխան արձանագրությամբ: Այս խնդիրը կարգավորված է §Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին¦ ՀՀ օրենքի նախագծով:

Կետ 9. Փորձաքննական եզրակացությունը հրապարակվում է 7-օրյա ժամկետում. շահագրգիռ կողմերը տեղեկացվում են այդ մասին գրավոր (հ. 11, կետ 8, Փորձաքննության մասին օրենք):

Կետ 10. Լիազորված մարմինը կարող է վերանայել կամ անվավեր համարել փորձագիտական եզրակացությունը, եթե՝

- ընդունվել են նոր օրենքներ,
- փորձագիտական եզրակացություն տալուց հետո ի հայտ են եկել նոր էկոլոգիական գործոններ:

Կետ 11. Միջոցառումներ չեն իրականացվել ԳՓՕ-ի կանխամտածված բաց թողնելու համար թույլտվության տրամադրմանը վերաբերող որոշումների կապակցությամբ 6-րդ հոդվածի դրույթների կիրառման ուղղությամբ: Ընթացքի մեջ է « Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը: Այս նախագծում ընդգրկված են ՕԿ-ի 6-րդ հոդվածի, ինչպես նաև Կոնվենցիային կից Ալմաթայի ուղղումների դրույթները:

XVI. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 6-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրագործման ժամանակ:

Պատասխան՝

1. Օրհուսի Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ պետական ծառայողների իրազեկության անբավարար մակարդակը:

2. Հասարակության մասնակցության ընթացակարգի իրավական կարգավորման որոշ թերություններ:

3. Առկա են նաև ֆինանսական խոչընդոտներ հասարակության լիարժեք ներգրավածությունն ապահովելու համար:

4. Ճիշտ է, www.mnp.am կայքում տեղադրվում են նախատեսվող գործունեությունների ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ հասարակական լսումների հայտարարությունները, սակայն դրանք երբեմն տեղադրվում են շատ ուշ՝ լսումներից մեկ-երկու օր առաջ, բացի այդ երբեմն կայքում չեն տեղադրվում նախածերի էլեկտրոնային տարբերակները: Այսպիսով, շահագրգիռ հանրությունը որոշ դեպքերում պատշաճ չի տեղեկացվում հասարակական լսումների հայտարարությունների, ինչպես նաև ներկայացվող փաստաթղթերի նախագծերի մասին:

XVII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցության մասին 6-րդ հոդվածի դրույթների կիրառման վերաբերյալ, օրինակ՝ կա՞ն արդյոք վիճակագրական տվյալներ կամ այլ տեղեկատվություն գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության մասին կամ նախատեսվող գործունեության տեսակների նկատմամբ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով տվյալ հոդվածի դրույթների չկիրառման որոշման մասին:

Պատասխան՝

Օրհուս կենտրոնները աջակցում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և անցկացված փորձաքննությունների վերաբերյալ հասարկությանը իրազեկելու, հասարակության մասնակցությունը ապահովելու, նրանց շահերը պաշտպանելու, հասարակական լսումներ կազմակերպելու և այլ բնապահպանական միջոցառումներ անցկացնելու գործընթացում:

Հանրային լսումների վերաբերյալ §Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին¦ ՀՀ օրենքի դրույթների կիրառումն ապահովելու համար լայնորեն օգտագործվում են Օրհուս կենտրոնների հնարավորությունները:

Վանաձորի քիմիական համալիրում ֆերոքրոմի արտադրության մտադրության հետ կապված հանդիպումներ են եղել Վանաձորի քիմիական գործարանի ներկայացուցիչների հետ: Ստացված տեղեկատվությունը տրամադրվել է լրագրողներին, ՀԿ-ներին, ինչպես նաև օգտագործվել է տեղեկատվական հանդիպումների և քննարկումների ընթացքում:

2013թ. հունիսի 21-ին Ալավերդու քաղաքապետարանում տեղի է ունեցել հասարակական լսում նվիրված Ալավերդու նոր աղբավայրի կառուցման նահագծին, որը կազմակերպել էին Ալավերդու քաղաքապետարանը և Ալավերդու Օրհուս կենտրոնը:

Չիչխան գետի վրա §Թռչկան¦ ՓՀԷԿ-ի կառուցման նպատակահարմարության վերաբերյալ տեղի են ունեցել բազմակողմ քննարկումներ, որոնց հիման վրա առաջարկություններ են ներկայացվել համապատասխան գերատեսչություններ: Արդյունքում 03.11.2011թ. ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 1588-Ն որոշումը, որով դադարեցվել է ՓՀԷԿ-ի կառուցումը: Նշված որոշման ընդունումը արդյունք էր քաղաքացիական հասարակության երկարատև և ակտիվ պայքարի: §Թռչկան¦ տեղամասի ՓՀԷԿ-ի կառուցումը դադարեցնելուց հետո ՀՀ բնապահպանության նախարարի 09.11.2012թ. թիվ 293-Ն հաստատվել է §Թռչկան¦, §Ջրվեժ¦ բնության ջրագրական հուշարձանի անձնագիրը:

§Բնապահպանական փորձաքննություն¦ ՊՈԱԿ-ի հետ համատեղ 2013թ. մայիսին Վանաձորի քաղաքապետարանում կազմակերպվել և անց է կացվել հասարակական լսումներ §ՀԳՇՆ¦ ՍՊԸ-ի կողմից Վանաձորի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների ծրագրի փաթեթի վերաբերյալ: Ծրագրային փաթեթը նախատեսում է իրականացնել Վանաձոր քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի փոխարինում նորով, որով էապես կկրճատվեն խմելու ջրի կորուստները և հնարավորինս ապահովել 24-ժամյա ջրամատակարարում: Հասարակության առաջարկությունները և դիտողությունները, վերաբերում էին քաղաքին տեխնիկական ջուր մատակարարելու, ջրաչափերի նոր դիտահորեր կառուցելու, քաղաքի կանաչապատ տարածքները չվնասելու և այլնի հետ:

Մեծ ծավալի աշխատանքներ են տարվել ու շարունակվում է Արմավիրի մարզի տարածքում գործող միակ ՝§Որդան Կարմիր՝¦ պետական արգելավայրի գործունեության, նրա նշանկության ու զարգացման հեռանկարների ուղղությամբ: Արգելավայի խնդիրների ու վիճակի բարելավմանն ուղղված հասարակական լսումներ է կազմակերպվել, լրատվամիջոցներով մեկնաբանվել արգելավայրի ստեղծման ու պահպանման կենսական անհրաժեշտության, նրանում պահպանվող՝ անհետացման եզրին հասած, որդան կարմիր միջատի կենսագործունեության, պատմության և զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Կազմակերպվել ու իրականացվել են երկու հասարակական լսումներ Արմավիրի մարզի տարածքում գործող ՀԱԷԿ-ի նոր էներգաբլոկների կառուցման, առկա իրավիճակի ու հեռանկարների ուղղությամբ:

Շուրջ տաս հասարակական լսումներ են կազմակերպվել մարզի որոռգման համակարգերի կատարելագործման նպատակով նոր ջրագծերի կառուցման, հների վերանորոգման և շրջակա միջավայրի վրա նրանց ունեցած ազդեցության բացահայտման ուղղությամբ:

Երկու հասարակական լսումներ են կազմակերպվել Փարաքար գյուղում կեղտաջրերի մաքրման նոր համակարգի կառուցման ուղղությամբ:

Պետական ու համայնքային սեփականության հողամսերի օտարման կամ օգտագործման տրամադրման ժամանակ լրատվական միջոցներով տրվում են

հայտարարություններ, որտեղ բնակչությունն իրազերկվում է հողատարածքի տնօրինման ընթացքում շրջակա միջավայրի պահպանման պայմանների և վերահսկողության ուղիների մասին: Զանգվածային լրատվամիջոցներով ազգաբնակչությունը իրազերկվում է նաև քաղաքաշինական նպատակներով իրականցվելիք հողհատկացումների ու շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ներգործունեության մասին:
XVIII. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:
www.aarhus.am, , www.nature-ic.am, www.mnp.am, www.mta.gov.am .

XIX. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՔԱՅԼԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԱԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ

Թվարկեք համապատասխան գործնական և այլ քայլեր՝ ուղղված շրջակա միջավայրին վերաբերող ծրագրերի և պլանների մշակման գործընթացին հասարակայնության մասնակցության ապահովման համար: Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ):
Պատասխան՝ ՀՀ-ում շրջակա միջավայրին վերաբերող պլանների և ծրագրերի մշակմանը հասարակայնության մասնակցության ընթացակարգը և սկզբունքները սահմանված են ՇՄԱՓ մասին օրենքով, որի համապատասխան դրույթների մի մասը պատրաստված նախագծով կհամապատասխանեցվեն ՕԿ դրույթներին: Գործնականում պլանների, ծրագրերի և քաղաքականության մշակմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն արդյունավետ չէ, ինչը հետևանք է մի շարք իրավական և կազմակերպչական խոչընդոտների: Պլանների և ծրագրերի նախապատրաստման գործընթացին հասարակության մասնակցության ապահովման համար գործնականում կիրառվում են հետևյալ միջոցները՝ 1. հասարակության հետ հանդիպումներ/բնապահպանական ծրագրերի հասարակական քննարկումներ,

2. հասարակական կարծիքի հարցումներ,
3. ստեղծվում են նաև աշխատանքային խմբեր, որոնց աշխատանքներին մասնակցում են փորձագետներ, տարբեր շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներ:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակած է §Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին¦ ՀՀ օրենքի նախագծում որոշակի փոփոխություններ են նախատեսվում նաև պլանների, ծրագրերի և քաղաքականության մշակմանը հասարակայնության մասնակցության ընթացակարգում: Մասնավորապես, կրճատվել է հայեցակարգի փորձաքննության ժամկետը, ինչն ինքնին գործող օրենսդրությամբ ինստիտուտի թերի կարգավորվածության պայմաններում կարող է նվազեցնել հասարակայնության մասնակցության արդյունավետությունը: Թեև նախագիծը որոշ չափով կարգավորում է փորձաքննության բուն ընթացակարգը, սակայն հասարակայնության մասնակցության կառուցակարգը սահմանվելու է ՀՀ Կառավարության որոշմամբ: Նախագծի համապատասխան դրույթների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ հայեցակարգի փորձաքննության շրջանակներում նախատեսվում է կազմակերպել երկու հասարակական լսում՝ հայեցակարգի և դրա վերաբերյալ մասնագիտական եզրակացության: Այդուհանդերձ, հայեցակարգի վերաբերյալ հասարակական լսումների կազմակերպման հետ կապված հարաբերությունները մնում են կարգավորման շրջանակից դուրս, մասնավորապես՝ ժամկետները, տեղեկատվության տարածման կարգը և պայմանները: Օրհուսի կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառումը խթանելու համար ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի կողմից մշակվել և 2013թ-ի մայիսին ՀՀ բնապահպանության նախարարություն է ներկայացվել §Հայաստանի Հանրապետության բանպահպանության նախարարին կից հասարակական խորհրդի ստեղծման գործունեության կարգը հաստատելու մասին¦ ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, որը չի ընդունվել: Նախագիծով նախատեսվում է ՀՀ բնապահպանության նախարարին կից մասնագիտական խորհրդի ձևավորում համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների, գիտնականների և ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհրդի հիմնական նպատակն է եզրակացություն տալ պլանների, քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ, որոնք առչվում են շրջակա միջավայրին:

ՇՄԱՓ մասին օրենքը չի սահմանում նաև ՕԿ 7-րդ հոդվածի առարկա հանդիսացող փաստաթղթերի (պլաններ, ծրագրեր և քաղաքականություններ) հասկացությունը: Դրա փոխարեն օրենքի հասկացությունների համակարգում տրված է «հայեցակարգ» հասկացությունը, որում ներառվում են հայեցակարգը, ծրագրերը, համալիր սխեմաները և գլխավոր հատակագծերը: Նշված բնորոշումը նեղացնում է ՕԿ 7-րդ հոդվածի կիրառման ոլորտը:

ՀՀ Սահմանադրության 14.1 կետի համաձայն՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից,

հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Քաղաքականության մշակման գործընթացին, ինչպես նաև շրջակա միջավայրի հետ կապված Միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաների և ծրագրերի իրագործման գործընթացին, Բնապահպանության նախարարությունը ներգրավում է այն ՈԿԿ-ներին, որոնք ակտիվորեն աշխատում են շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

1998 թ. հոկտեմբերի 28-ին քաղաքաշինության ոլորտում ընդունվել է «Կենսագործունեության միջավայրի նախատեսվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի վերաբերյալ որոշումների քննարկմանը և ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչներ իմասնակցության կարգը սահմանելու մասին» Կառավարության N 660-Ն որոշումը:

Պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են վերոնշյալ փաստաթղթերը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում տեղեկացնել հասարակությանը այս փաստաթղթերին ծանոթանալու պայմանների և հրապարակման, ցուցադրման ու հասարակական քննարկումների տեղի և ժամանակի մասին:

Քաղաքաշինության բնագավառում գործող մի շարք իրավական ակտեր (*§Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին՝ ՀՀ կառավարության 2003-08-08 N997-Ն որոշում, §Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին՝ ՀՀ կառավարության 2001-05-14 N408 որոշում, ՀՀ կառավարության 1998թ-ի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին՝ N812 որոշում, §Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին՝ ՀՀ կառավարության 1998-10-28 N660 որոշում*) տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացում նախատեսում են ծրագրերի սկզբնական՝ վաղ փուլերում նախագծային առաջադրանքների կազմման, ինչպես նաև մշակված նախագծերի համաձայնեցման փուլերում հասարակայնության մասնակցության հնարավորություն:

2007 թվականին ընդունվել է ՀՀ համար բացառիկ կարևորության փաստաթուղթ՝ ՀՀ նախագահի հրամանագիրը «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» (07.02.2007թ. ՆՀ-37-Ն): Հասարակայնությունը մասնակցություն է ունեցել փաստաթղթի մշակմանը: ՀՀ

Ազգային Ժողովի նիստերի դահլիճում հասարակայնության լայն շրջանակների մասնակցությամբ անցկացվել է ռազմավարության նախագծի քննարկում:

Նշված նախագծի հիման վրա 2013թ-ին մշակվել է գործողությունների համապատասխան ծրագիր, որը ներառում է նաև բնապահպանական բաղադրիչ, որի քննարկմանը մասնակցել են նաև բնապահպանական ՈԿԿ-ների ներկայացուցիչներ, որոնց առաջարկությունները և դիտողությունները հաշվի են առնվել:

Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի մասնագետների աջակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարության §Ջիկատար բնապահպանական կենտրոն¦ ՊՈԱԿ-ի կողմից կազմվել է §ՀՀ Լոռու մարզի տարածքում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքների¦ հաշվետվության նածագիծը, որը ներկայացված է շահագրգիռ կառույցների քննարկմանը:

XX. 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԱԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարզաբանեք, թե ինչ հնարավորություններ են ընձեռվում հասարակայնությանը 7-րդ հոդվածի համաձայն՝ մասնակցելու շրջակա միջավայրին վերաբերող քաղաքականությունների մշակմանը:

Պատասխան՝

Պլանների և ծրագրերի նախապատրաստման գործընթացին հասարակության մասնակցության ապահովման համար օգտագործվում են հետևյալ միջոցները՝ հասարակության հետ հանդիպումներ, հասարակական կարծիքի հարցումներ, երբեմն նաև աշխատանքային խմբեր, որոնց մասնակցում են փորձագետներ, տարբեր շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներ:

Տարբեր ծրագրերի իրականացման նպատակով ստեղծվում են աշխատանքային խմբեր, որի աշխատանքներին ներգրավվում են հասարակական փորձագետներ: ՈԿԿ-ների փորձագետները (որպես շահագրգիռ հասարակայնություն), համապատասխան նախարարությունների ներկայացուցիչները և մյուս մասնագետները հանդիսանում են հիմնական նպատակային խմբերը այս գործընթացում:

Օրինակ Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինության խորհրդի բնապահպանության հանձնաժողովը հիմնականում բաղկացած է բնապահպանական հասարակական կազմակերպությունների անդամներից:

Հանձնաժողովի նիստերին ներկայացվող նախագծերը, ծրագրերը ոչ միայն քննարկվում են հանձնաժողովի անդամների, այլև հասարակական կազմակերպությունների այլ անդամների կողմից:

Վերջնական կարծիքը ընդգրկում է հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է. «Քաղաքացիներն անկախ

ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները» (հոդված 15)։

ՇՄԱՓ մասին ՀՀ օրենքի համաձայն՝ ներկայացնողը պարտավոր է կամզակերպել հայեցակարգի հասարակական լսումներ և հաշվի առնել հասարակական կարծիքը։ Այս դրույթը քաղաքականություններ մշակելիս հասարակայնության կարծիքը հաշվի առնելու հնարավորությունը սահմանող միակ դրույթն է, որի կիրառումը պատշաճ ձևով չի ապահովվում։

2010 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ վավերացրել է Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրությունը (2003թ., Կիև), որն ուղղված է ապահովելու հասարակայնության մասնակցությունը պլանների ու ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում։

XXI. 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 7-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրացման ընթացքում։

Պատասխան՝

1. պետական պաշտոնյաների ոչ բավարար համոզվածությունը անկախ փորձագետների հետ աշխատանքի մեջ (հաճախ պայմանավորված է չափից դուրս ծանրաբեռնվածությամբ և, ինչպես նշված է վերևում, այս գործընթացը լիարժեք կարգավորող նորմատիվ իրավական ակտի բացակայությամբ)։
2. որոշ ՈԿԿ-ներ որպես պայման առաջ են քաշում այս գործընթացում իրենց մասնակցության համար վարձատրություն։
3. երբեմն ՈԿԿ-ները չունեն բավարար մասնագիտական որակներ, որպեսզի ներգրավվեն նշված գործընթացներում՝ նախագծերի, քաղաքականության մշակման վաղ փուլերում, այդ պատճառով նրանց մեկնաբանությունները և առաջարկությունները չեն կարող արդյունավետ կերպով ազդել ընդունվող որոշումների որակի վրա։

XXII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն որոշակի գործողությունների վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության մասին 7-րդ հոդվածի դրույթների կիրառման վերաբերյալ։

Պատասխան՝

Վիճակագրական տվյալները բացակայում են։

XXIII. 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:
www.aarhus.am, www.nature-icam, www.gov.am, www.mnp.am, www.armstat.am, www.e-gov.am, www.elrc.ysu.am, www.mta.gov.am:

XXIV. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԶԳԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՁԱՆՔԵՐ

Ներկայացրեք, թե ինչ միջոցառումներ են իրականացվում աջակցելու համար հասարակայնության արդյունավետ մասնակցությանը պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող անմիջական կիրառման նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանորեն պարտադիր նորմատիվ ակտերի մշակման գործում՝ համաձայն 8-րդ հոդվածի: Որքանով հնարավոր է, ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ):
Պատասխան՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից» : 03.04.2002 թ. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Իրավական ակտը իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պաշտպանման, պահպանման, իրագործման կամ կատարման ենթակա իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունները, սահմանափակումները կամ այլ կանոնները»: 2008թ. դեկտեմբերին «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը լրացվել է 27.1 հոդվածը, որի համաձայն օրենսդրական ակտերը պետք է ենթարկվեն կարգավորման ազդեցության գնահատման մի շարք ոլորտներում, այդ թվում՝ շրջակա միջավայրի ոլորտում, ընդ որում հոդվածի շրջանակներում նախատեսվում են նաև հանրային քննարկումներ, որոնց կազմակերպման և իրականացման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 25.03.2010թ. N 296-Ն որոշմամբ: Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի՝ 2009 թվականի օգոստոսի 13-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 921-Ն որոշումը §Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության

գնահատման կարգը հաստատելու մասին¦: Կառավարության նշված որոշումներն ուժի մեջ են մտնել 2011 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ հարկ է նշել, որ օրենքում սահմանված ազդեցության գնահատման 15-օրյա ժամկետը որոշ դեպքերում կարող է բավարար չլինել:

Այսինքն՝ մինչև վերոհիշյալ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը պետությունը նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակմանը հասարակայնության մասնակցությունն ապահովելու ուղղակի պարտավորություն չի կրում:

Որոշ ՈԿԿ-ներ սեփական նախաձեռնությամբ անցկացնում են հասարակական քննարկումներ՝ այս գործընթացին ներգրավելով լիազորված պետական մարմնի կամ այլ շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ: Երկրում գործում է շրջակա միջավայրի վերաբերյալ օրինագծերի պառլամենտական լսումների անցկացման պրակտիկան, որոնց ժամանակ հրավիրվում են ՈԿԿ-ների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և ԱԺ-ը ակտիվորեն համագործակցում են ԷԻԳԿ-ի հետ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպելիս (օրինակ՝ §Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածաության մասին¦ օրենքի նախագծի, §Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին¦ ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարելու մասին¦ ՀՀ օրենքի նախագծի հանրային լսումները): Այս պրակտիկան թույլ է տալիս օգտագործել համապատասխան գիտական կառույցների և առանձին գիտնականների ներուժը:

XXV. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 8-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրացման ընթացքում:

Պատասխան՝

1. Անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառման կանոնների պատրաստմանը հասարակության մասնակցության հստակ իրավական կարգավորման անբավարար մակարդակը:
2. Հասարակության վաղ իրազեկման անբավարար մակարդակը կամ չիրազեկելը:
3. Նորմատիվ ակտերի նախագծերի պատրաստման ժամանակ հասարակության դիտողությունների հաշվի առնման ընթացակարգը կանոնակարգված չէ, կամ հաճախ հասարակության դիտողությունները չեն ընդունվում: Հասարակությունը չի տեղեկացվում իր մեկնաբանությունները և առաջարկությունները հաշվի չառնելու պատճառների և հիմքերի մասին, ինչը նվազեցնում է ՈԿԿ-ների՝ այս գործընթացին մասնակցելու ակտիվությունը:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ օրենսդրությունը, այդ թվում նաև

շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, բավականին ինտենսիվորեն զարգանում է: Սակայն գործընթացը տեղի է ունենում հասարակայնության մասնակցության ոչ արդյունավետ մակարդակի պայմաններում: Ելնելով ՕԿ 8-րդ հոդվածի պահանջներից՝ բնապահպանական օրենսդրական ակտերը ներկայացվում են հասարակական քննարկումների, սակայն նախագծերի ընդունման համար սահմանված չափազանց կարճ ժամկետները և հասարակական կարծիքի ազդեցության ցածր մակարդակը շարունակում են մնալ որպես հիմնական խոչընդոտներ:

XXVI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն հասարակայնության մասնակցության վերաբերյալ 8-րդ հոդվածի մասով:

Պատասխան՝

Հայաստանում կա այսպիսի փորձ, երբ Ազգային Ժողովի կազմակերպած հասարակական լսումներին՝ ներգրավվում են ԶԼՄ-ների, ՈԿԿ-ների, պաշտոնատար անձանց և այլք (օրինակ՝ §Սևանա լճի մասին¦ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին¦ ՀՀ օրենքի նախագիծ, §Հուղարկավորությունների կազմակերպման ու գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին¦ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին¦ ՀՀ օրենքի նախագիծ):

ՀՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներին կից գործում է անկախ փորձագետների ինստիտուտը՝ բաղկացած գիտական և հասարակական սեկտորների ներկայացուցիչներից:

Պետական մարմինները խթանում են հասարակական կարծիքի արտահայտումը՝ ինտերնետում օրենսդրական նախագծերի հրապարակման միջոցով:

2013 թվականի փետրվարին ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի կողմից անցկացվեց §Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատումների մասին¦ ՀՀ օրենքի նախագծի քննարկում: ԷԻԳԿ-ն մշակվել էր դիտողությունները և առաջարկները, որոնք մասամբ ընդունվել են:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված §Բնապահպանական ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգի հավանություն տալու մասին¦ ՀՀ Կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ 2013 թվականի փետրվարին ԷԻԳԿ-ում տեղի ունեցավ քննարկում: ԵՊՀ ԷԻԳԿ-ը որոշման նախագծի վերաբերյալ մշակել էր դիտողություններ և առաջարկներ, որոնք ներկայացվեցին քննարկման ընթացքում: Նախագիծը չի ընդունվել:

XXVII. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան։
www.justice.am, www.mnp.am, www.gov.am, www.armaarhus.am, www.elrc.ysu.am

XXVIII. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք արդարադատության մատչելիության վերաբերյալ 9-րդ հոդվածի դրույթների իրացմանն ուղղված օրենսդրական և կարգավող այլ միջոցները։

Պարզաբանեք, թե ինչպես է իրագործվում 9-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրը։ Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ)։ Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

ա) **1-ին կետի** մասով ձեռնարկված միջոցները, որպեսզի

(i) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ իր՝ 4-րդ հոդվածին համապատասխան ներկայացված տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը չի քննարկվել այդ հոդվածի դրույթներին համապատասխան, վերանայման ընթացակարգի հնարավորություն ունենա դատարանում կամ օրենքի համաձայն հիմնված անկախ և անկողմնակալ այլ մարմնում։

(ii) այն դեպքերում, երբ նախատեսվում է դատական քննություն, անձի համար պետք է մատչելի լինի նաև որոշման վերանայման օրենքով սահմանված արագ ընթացակարգ, որն անվճար է կամ ոչ թանկ և իրականացվում է ոչ դատական պետական կամ այլ անկախ և անկողմնակալ մարմնի կողմից։

(iii) սույն կետին համապատասխան ընդունված վերջնական որոշումները պարտադիր լինեն տեղեկատվություն տնօրինող պետական մարմնի համար, և տեղեկատվություն տրամադրելու մասին հարցումը մերժելու դեպքում պատճառները շարադրվեն գրավոր։

բ) ձեռնարկված միջոցները՝ ուղղված նրան, որպեսզի ազգային օրենսդրության շրջանակներում **2-րդ կետում** նշված չափանիշներին համապատասխանող հասարակայնության ներկայացուցիչների համար մատչելի լինի վերանայման ընթացակարգը դատարանում կամ օրենքի համաձայն հիմնադրված այլ անկախ և անկողմնակալ մարմնում վիճարկելու 6-րդ հոդվածի դրույթներից բխող ցանկացած որոշման, գործողության կամ

անգործության նյութական և ընթացակարգային օրինականությունը:

գ) **3-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք ապահովում են, որպեսզի ազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (եթե այդպիսիք առկա են) համապատասխանող հասարակայնության ներկայացուցիչներին մատչելի լինեն վարչական կամ դատական ընթացակարգերը՝ մասնավոր անձանց կամ պետական մարմինների՝ շրջակա միջավայրին վերաբերող ազգային օրենսդրության դրույթները խախտող գործողությունները կամ անգործությունը վիճարկելու համար:

դ) **4-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի՝

(i)1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված ընթացակարգերն ապահովեն իրավական պաշտպանության համարժեք և արդյունավետ միջոցներ,

(ii) հակառակ դեպքում այդպիսի ընթացակարգերը համապատասխանեն սույն կետի պահանջներին:

ե) **5-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք ապահովում են, որպեսզի հասարակայնությանը տրամադրվի տեղեկատվություն որոշումների վերանայման վարչական և դատական ընթացակարգերի մատչելիության վերաբերյալ:

Պատասխան՝ 2005թ. հունվարի 23-ից հետո ՀՀ օրենսդրությունում իրականացվել են մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են իրավունքների պաշտպանության արտադատական և դատական ընթացակարգերի մատչելիության ապահովմանը:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի սահմանումների առումով կարելի է արձանագրել հետևյալը.

«Պետական մարմին» հասկացությունն, ըստ էության, տրվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» (18.02.2004թ.) ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում: Օրենքում սահմանված բնորոշումը գրեթե ամբողջությամբ համընկնում է պետական մարմնի վերաբերյալ բնորոշմանն՝ իր մեջ ընդգրկելով պետական կառավարման բոլոր այն մարմիններին, որոնք իրականացնում են վարչարարություն:

«Էկոլոգիական տեղեկատվություն» հասկացությունը մինչև այժմ չի ստացել ամրագրում ՀՀ օրենսդրությունում: Թեև ստեղծված իրավիճակում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով հնարավոր է կոնկրետ հարաբերությունները կարգավորելիս կիրառել Կոնվենցիայի բնորոշումը, այդուհանդերձ, դրա օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ է էկոլոգիական տեղեկատվության մատչելիության կապակցությամբ առաջացող այլ հարաբերությունների (օրինակ՝ մերժման հիմքերի) համակարգային և մանրամասն կարգավորման համար:

«Հասարակայնություն» եզրույթի հասկացությունը սույն կոնվենցիայի

իմաստով ՀՀ օրենսդրությունում բացակայում է, քանի որ հանրային և մասնավոր հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերում տրվում է իրավունքի սուբյեկտների հստակ կազմ և դրանց յուրաքանչյուրի կարգավիճակը: ՀՀ բնապահպանության նախարարությունը մշակել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների և փորձաքննության մասին ՀՀ օրենքի նախագիծ», որի 4-րդ հոդվածում տրվում է հանրության հետևյալ բնորոշումը. **հանրություն՝ մեկ կամ մեկից ավել ֆիզիկական կամ իրավաբանական:** Այս բնորոշումը բառացիորեն կրկնում է Օրհուսի կոնվենցիայի 3-րդ հոդվածում տեղ գտած հասկացությունը:

«Շահագրգիռ հասարակայնություն» եզրույթը ՀՀ օրենսդրությունում ինկորպորացվել է մասնակիորեն: «ՇՄԱՓ» մասին օրենքը օգտագործում է միայն «ազդակիր համայնք» եզրույթը, որը վերաբերում է միայն ազդեցության ենթակա մարզի(երի) կամ համայնքի(ների) բնակչությանը: ՀՀ բնապահպանության նախարարության մշակած Նախագծի նույն հոդվածում սահմանվում է նաև շահագրգիռ հասարակայնության հասկացությունը: Այն կրկնում է Կոնվենցիայում ամրագրված հասկացությունը: Միևնույն ժամանակ նախագծում պահպանվել է գործող օրենքում տեղ գտած ազդակիր համայնք հասկացությունը. **ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն:**

Խտրականության արգելման մասին տե՛ս 4-րդ հոդված:

Դատական ընթացակարգեր

ՀՀ Սահմանադրության 101 հոդվածը ընդարձակել է Սահամանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Սահմանադրության նշված հոդվածի առաջին պարբերության 6-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով իրավունք ունի դիմելու ՀՀ Սահմանադրական դատարան, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:
ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո հոդված 92 ամրագրում է ՀՀ բարձրագույն դատական ատյանի՝ Վճռաբեկ դատարանի նոր կարգավիճակը: Համաձայն 92 հոդվածի՝ «Վճռաբեկ դատարանը կոչված է ապահովել օրենքի միատեսակ կիրառություն: Սա ենթադրում է նախադեպային իրավունքի աստիճանական ներդրում ՀՀ իրավական համակարգում: ՀՀ վճռաբեկ դատարանի վճիռները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և տեղադրվում են www.dataelex.am www.armlaw.am և laws.am ինտերնետային կայքերում և մատչելի են բոլորի համար:

21.02.2007թ. ՀՀ-ում ընդունվել է Դատական օրենսգիրք, որի հիման վրա ՀՀ դատական համակարգում իրականացվել են փոփոխություններ: Այդուհանդերձ երրորդ ազգային զեկույցի ներկայացումից հետո ՀՀ դատական

համակարգն էական փոփոխությունների չի ենթարկվել: Միայն 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 2010 թվականի դեկտեմբերի 1-ից ՀՀ-ում գործում է ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը:

22.02.2007թ. ընդունվել է «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենք: Օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը ընգրկում է նաև վարչական դատավարության կագով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը»:

Շրջակա միջավայրին առնչվող հայցերի քննության դատական ընթացակարգերի և կայացված վճիռների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորություն է ընձեռում 2007թ. մայիսի 18-ին ստեղծված ՀՀ դատական համակարգի ինտերնետային էջը, /www. court. am/: Այստեղից կարելի է նաև ստանալ տեղեկատվություն դատարանների, նրանց կողմից կայացվող վճիռների, Դատարանների նախագահների խորհրդի, Արդարադատության խորհրդի, ինչպես նաև այլ տեղեկություններ՝ կապված ՀՀ դատական համակարգի գործունեության հետ

Ներկայումս գործում է www.datalex.am կայքը, որը հնարավորություն է ընձեռում անվճար և առանց որևէ այլ բնույթի սահմանափակման ներբեռնել տարբեր ատյանների կայացրած դատական ակտերը:

ՀՀ-ում դատաիրավական բարփոխումների արդյունքում 28.11.2007 թ ընդունվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և Հանրապետությունում գործառում է ՀՀ վարչական դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան: Սույն հոդվածի իմաստով նշված Օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը կարևորվում էր նրանով, որ Օրենսգրքի ընդունումից հետո վարչական դատավարության կարգով են քննվելու տեղեկատվության տրամադրման մերժման և հասարակության մասնակցության ընթացակրգի հետ կապված ընդունվող որոշումների բողոքարկումը:

Արտադատական ընթացակարգեր

2004թ փետրվարի 18-ին ընդունվել և 2005թ. դեկտեմբերի 31-ին ուժի մեջ է մտել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: Օրենքը սահմանում է վարչարարության հիմունքներըկարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Կետ 1.

I. Ցանկացած անձ, ով գտնում է, որ իր՝ 4-րդ հոդվածի համաձայն ներկայացված տեղեկատվության մատչելիության վերաբերյալ խնդրանքը, ապօրինի մերժվել է, չի բավարարվել պատշաճ կերպով, իրավունք ունի բողոքարկել մերժումը՝ դիմելով լիազորված պետական մարմին կամ դատարան (23.09.2003 թ. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, կետ 4):

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու մասին» (24.11.1999թ.) ՀՀ օրենքի համաձայն՝ «Ցանկացած անձ իրավունք ունի բողոքով դիմել դատարան, եթե համարում է, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, նրանց պաշտոնատար անձանց կամ կազմակերպությունների անօրինաչափ գործողությունների կամ որոշումների հետևանքով խախտվել են իր իրավունքները և ազատությունները (հոդված 11):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» (18.02.2004թ.) ՀՀ օրենքի10-րդ գլխի 69-րդ հոդվածի համաձայն՝ «Անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ վարչական ակտ)»: Նույն օրենքի հոդված 70 համաձայն «Ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով»:

Եթե ակտը բողոքարկվել է վարաչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում: Վարչական մարմինը վարչական վարույթը պետք է իրականացնի առանց դա բարդեցնելու ՝ լրացուցիչ լսումներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ զննում կատարելու, եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 3-րդ հոդվածը սահմանում է ՀՀ Վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Դատարան դիմելու իրավունք օրենսգիրքը վերապահում է յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի, եթե նրանք համարում են, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իրենց՝ իրավական ակտերով, այդ թվում նաև միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը դատարան դիմելու իրավունք վերապահում է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև արագացված դատաքննության կիրառման հնարավորություն հետևյալ դեպքերում՝

1) անհրաժեշտ չէ լսել փորձագետին կամ հարցաքննել վկաներին, զննում կատարել, տալ դատական հանձնարարություններ, և եթե գործը բանավոր դատաքննության նշանակելուց հետո կողմերը գրավոր տեղեկացրել են դատարանին բանավոր ընթացակարգով դատաքննությանն իրենց չմասնակցելու մասին.

2) անհրաժեշտ չէ լսել փորձագետին կամ հարցաքննել վկաներին, զննում կատարել, տալ դատական հանձնարարություններ, և եթե կողմերը գրավոր համաձայնություն են ներկայացրել գործը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ.

3) հայցն ակնհայտ հիմնավոր է.

4) հայցն ակնհայտ անհիմն է:

Դիմում Օմբուդսմենին (Մարդու իրավունքների պաշտպանին)

Օմբուդսմենը, ստանալով բողոքը, իրավունք ունի՝

- ընդունել այն քննարկման համար,
- պարզաբանել դիմողի համար այն միջոցները, որոնք նա կարող է օգտագործել իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար,
- փոխանցել բողոքն այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին, որոնց իրավասության շրջանակներում է, ըստ էության, տվյալ բողոքի լուծումը:

Սահմանադրության փոփոխություններից հետո ամրագրվել է նոր՝ 83.1 հոդվածը, որը սահմանում է, Օմբուդսմենին ներկայացվող հիմնական պահանջները, ընտրության կարգը գործունեության հիմնական երաշխիքները: Սահմանադրական վերը նշված դրույթների պահանջներին համապատասխան 21.10.2003թ. ընդունված օրենքում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում /ընդունվել է 06.01.2006/, կատարվել են փոփոխություններ: Յուրաքանչյուր տարի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ներկայացնում է զեկույց ՀՀ-ում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ: Այդ զեկույցում անդրադարձ է կատարվում նաև մարդու էկոլոգիական իրավունքներին: 2012 թվականի զեկույցում ամրագրված է, որ Հանրապետությունում Օրհուսի կոնվենցիայի ոլորտում գտնվող իրավահարաբերությունների հստակ կարգավորում դեռևս չի իրականացվել (http://www.ombuds.am/library/library/page/101/type/3):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (06.12.1985թ.) 97 հոդվածը սահմանում է պատասխանատվություն վթարի փաստը թաքցնելու, վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելու, ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելու համար: Նույն օրենսգրքի հոդված 97 սահմանում է պատասխանատվություն Միջուկային և ճառագայթային անվտանգության

վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու կամ աղավաղելու համար։

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 282 սահմանում է պատասխանատվություն մարդկանց կյանքի եւ առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկությունները թաքցնելու կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելու համար։

<u>Կետ 2.</u>

Հայաստանի Հանրապետությունում 9-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները ուղղակիորեն կիրառվել են ՀՀ դատական համակարգի տարբեր ատյանների կողմից։ ՀՀ ազգային օրենսդրության և Օրհուսի կոնվենցիայի դրույթները ստացել են տարբեր մեկնաբանություններ ՀՀ դատական համակարգի ատյանների կողմից։ Հիմնական խնդիրը հասարակական կազմակերպությունների՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի չափանիշների ոչ հստակ ամրագրումն է ազգային օրենսդրությունում։

Գործելով իր իրավական կարգավիճակից բխող լիազորությունների շրջանակում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է հասարակական կազմակերպությունների՝ դատարան հանրային շահերի պաշտպանության նպատակով դիմելու առանձնահատուկ չափանիշներ։ ՀՀ վճռաբեկ դատարանը, քննելով ներկայացված բողոքը, 30 հոկտեմբերի 2009 թվականի որոշմամբ բավարարել է այն մասնակիորեն։ Հղում կատարելով «Էկոդար» և «Թրանսփարենսի Ինթերնեշնըլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ների կանոնադրություններին՝ դատարանը արձանագրել է, որ «Էկոդար» ՀԿ-ը գրանցված է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, բավարարում է ազգային օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին և, հիմք ընդունելով վերջինիս կանոնադրային նպատակները և խնդիրները, զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության հարցերով, ուստի Օրհուսի կոնվենցիայի իմաստով վերջինիս պետք է դիտարկել որպես շահագրգիռ հասարակայնություն։

ՀՀ դատական համակարգի բարձրագույն ատյանը ՀՀ վճռաբեկ դատարանն է, որի որոշումները ՀՀ օրենսդրության համաձայն ունեն նախադեպային նշանակություն և պարտադիր են կատարման ստորադաս դատարանների համար։ 30.10.2009 թվակնի թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ ՀՀ վճռաբեկ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալու որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է (տես 30.10.2009 թիվ ՎԴ/3275/05/08)։

Չնայած ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական

դիրքորոշմանը, ՀՀ վաչական դատարանը գործըն ըստ էության լուծող ակտում՝ վճռում վերահաստատեց իր նախկին դիրքորոշումն առ այն, որ հասարակական կազմակերպությունները հանրային շահերի պաշտպանության պահանջով դատարան դիմելու իրավունք չունեն:

Սույն գործի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանի առաջադրած դատավարական իրավասուբյեկտության չափանիշը հետևյալն է. եթե որևէ հասարակական կազմակերպություն բավարարում է ազգային օրենսդրությամբ ներկայացվող չափանիշներին և իր կանոնադրային նպատակներին և խնդիրներին համապատասխան զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության հարցերով, պետք է համարվի շահագրգիռ հասարակայնություն՝ հաշվի առնելով Օրհուսի կոնվենցիայի առաջադրած պահանջները, և պետք է ունենա իրավունք դատարանում վիճարկելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերը, գործողություններն ու անգործությունը:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը դարձել են նաև Սահմանադրական արդարադատության առարկա, երբ ՀԿ-ները վիճարկում էին Օրենսգրքի 3-րդ հոդվածի «նրա» եզրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության, քանի որ դա 18-րդ հոդվածին հնարավորություն չի ընձեռում դիմելու դատարան հանրության իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: ՀՀ սահմանադրական դատարանը իր ՍԴՈ 906 որոշմամբ, արձանագրելով այս ոլորտում ՀԿ-ներին դատարան դիմելու իրավունքի տրամադրման անհրաժեշտությունը, որոշել է, որ օրենսգրքում ամրագրված «նրա» եզրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:
Այնուհանդերձ, բնապահպանական հասարակական կազմակերպություններին շրջակա միջավայրին առնչվող հարցերով դատարան դիմելու իրավունքով օժտող որոշումը կյանքի չի կոչվել: Հետագայում՝ 01 ապրիլի 2011թ. թիվ ՎԴ/3275/05/09 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նույն գործի շրջանակներում սահմանել է նախնական դիրքորոշմանը չհամապատասխանող տեսակետ նշելով, որ «... ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են»: Սույնով ՀՀ վճռաբեկ դատարանը ուժի մեջ է թողել ՀՀ վարչական դատարանի վճիռը, որով չի ճանաչվել հասարակական կազմակերպությունների՝ հանրային իրավունքների պաշտպանության հայցերով դատավարական իրավասուբյեկտությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան վարչական դատարան դիմելու իրավունք ունեն այն անձիք, որոնք համարում են, որ խախտվել են իրենց իրավունքները: Վարչական արդարադատությունը կրում է հասցեավորված բնույթ: Այսինքն՝ անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել դատարան, երբ

հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն՝ վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները … վարչական դատարան դիմելով արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը, որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերը անմիջականորեն շոշափվել են»: Այս կապակցությամբ, 2013 թվականի հուլիսի 16-ին կայացրած ACCC/C/2011/62 որոշմամբ, Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն որոշում է կայացրել այն մասին, որ ՀՀ կառավարության և ՀՀ բնապահպանության նախարարության որոշումները վիճարկող՝ «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացրած դատական հայցը վարույթ չընդունելով՝ Հայաստանի կառավարությունը չի պահպանել Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը: Օրհոսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն Հայաստանի կառավարությանն առաջարկել է փոփոխություններ մտցնել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում՝ հստակորեն ամրագրելով հասարակական կազմակերպությունների՝ վարչական մարմինների գործողությունները դատական կարգով վիճարկելու իրավունքը:

Սույն զեկույցը պատրաստելու դրությամբ ACCC/C/2011/62 որոշմամբ ներկայացված առաջարկությունների կենսագործման ուղղությամբ որոշակի քայլեր դեռևս չեն ձեռնարկվել:

Վերոնշյալ դատական գործընթացից հետո մի քանի անգամ հասարակական կազմակերպությունները կրկին նախաձեռնել են դատական վարույթներ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Այդպիսի գործընթացի օրինակ կարող է ծառայել Առաջին ատյանի վարչական դատարանի ՎԴ *2209/05/11* գործը, որով հասարակական կազմակերպությունները պահանջել են պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարությանը անցկացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն Երևան քաղաքի դելֆինարիայի համար: Դատարանը ընդունել է վարույթ Էկոդար ՀԿ և Թռչնասերների ասոցացիա ՀԿ դիմումները, սակայն, հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի N 906 որոշմանը և ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի ապրիլի 1-ի N /3275/05/09 որոշմանը, մերժել է հայցադիմումի բավարարումը: Մերժման հիմքում այն պատճառաբանությունն է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել դատարան իրենց իրավունքների և որոշակի իրավիճակի միջև ուղղակի իրավական կապի առակայության պարագայում:

ՀՀ դատական պրակտիկայում տեղ են գտել նաև գործեր, երբ մի շարք քաղաքացիների դիմումի հիման վրա իրականացվել է շրջակա միջավայրի պահպանության շահերի պաշտպնություն: Այսպես, ՍԴ//0799/02/10 գործի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի 22 բնակիչներ հայց էին ներկայացրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Հայջրմուղկոյուղի ՓԲ ընկերության՝ պահանջելով կատարել պայմանագրով ստանձնած կեղտաջրերի մաքրման, հեռացման պարտավորությունները և դրանով իսկ վերացնել մարդանց առողջության և շրջակա միջավայրի համար գոյություն ունեցող ռիսկը: Դատարանը

ներկայացված պահանջը ամբողջությամբ բավարարել է:

Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծելու այն, որ տվյալ գործում պաշտպանվող շահի հիմքում ընկած է պայմանագիր, որն ուղղակիորեն հաստատում է ֆիզիկական անձանց՝ այդ շահի կրող լինելու հանգամանքը:

16.05.2013 թվականին թիվ ՎԴ/3431/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը, հիմնվելով ՀՀ վճռաբեկ դատարանի 01 ապրիլի 2011թ. թիվ ՎԴ/3275/05/09 որոշման վրա, վարույթ չի ընդունել Ջերմուկ համայնքի բնակիչ Վիկտորիա Գրիգորյանի հայցն ընդդեմ կառավարության այն որոշման, որով կառավարությունը հրաժարվում էր Ջերմուկ համայնքին հարակից վայրում հանքավայրի շահագործման համար Ջերմուկը ճանաչել որպես ազդակիր համայնք: Դատարանի վճռի համաձայն, համայնքի անունից կարող է հանդես գալ միայն համայնքի ղեկավարը:

Հետագայում՝ 27.06.2013 թվականին, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ նշված որոշումը ուժի մեջ է թողնվել: Այսպիսով, շրջակա միջավայրին վերաբերող հարցերով որոշումների ընդունման գործընթացի արդյունքում շահագրգռվածություն ունեցող հասարակությունը (պոտենցիալ ազդակիր համայնքի անդամները) հնարավորություն չի ստացել դատական կարգով վիճարկելու կառավարության դիրքորոշումը՝ Ջերմուկ համայնքն ազդակիր համայնք չճանաչելու վերաբերյալ:

Ոլորտի դատական պրակտիկան ներկայացված է նաև Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության վերաբերյալ դատական գործերի տեղեկատվական բազայում (http://www.unece.org/environmental-policy/treaties/public-participation/aarhus convention/envpptfwg/envppatoj/jurisprudenceplatform.html):

ՀՀ-ն նաև ներգրավվել է ՄԱԿ-ի ԵՏՀ Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության նախաձեռնությամբ Արդարադատության մատչելիության թիրախային խմբի հովանու ներքո անցկացված երկու հետազոտություններին, որոնց շրջանակներում համակողմանիորեն ներկայացվել են Հանրապետությունում արդարադատության մատչելիության հետ կապված բոլոր խնդիրները:

Ազգային մակարդակում հետազոտություն է անցկացվել նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ, որում նույնպես ներկայացվել են արդարադատության մատչելիության վերաբերյալ գոյություն ունեցող հիմնախնդիրները:

<u>Կետ 3.</u> Հասարակայնության ներկայացուցիչները, այդ թվում՝ ՈԿԿ-ները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի ուժով և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավունք ունեն մասնակցելու վարչական կամ դատական ընթացակարգերին՝ մասնավոր անձանց կամ պետական մարմինների գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու դեպքում (վարչական դատավարության կարգով բողոքարկելու դեպքում վերոգրյալ 2-րդ կետում նախատեսված օրենսդրական սահմանափակումների շրջանակում, եթե այդ վարույթի առարկան ուղղակիորեն առնչվում է նրանց իրավունքներին և օրինական շահերին):

Քաղաքացիների դիմումները և բողոքներն (վարչական ընթացակարգեր) արտադատական քննություն իրականացնող մարմիններին ներկայացվում են առանց որոշակի տուրքեր վճարելու, իսկ դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն և «Պետական տուրքի մասին» (27.12.1997թ.) ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

Կետ 4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերն ամրագրում են սույն կետով նախատեսված պահանջների իրականացման մի շարք սկզբունքներ, միջոցներ և երաշխիքներ: Մասնավորապես ՀՀ դատավարական օրենսդրությամբ ամրագրված են մրցակցության, իրավահավասարության, գործի քննության հրապարակայնության սկզբունքները, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ գլուխը սահմանում է հայցի ապահովման միջոցների կիրառման իրավական հիմքերն ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ վարչական դատավարության ընթացքում (ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, Գլուխ 14):

ՀՀ վարչական դատարան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների, անգործության և ակտերի բողոքարկման համար որպես բազային տուրքի չափ նախատեսված է 4000 դրամը (մոտավորապես՝ 8€):

Ընդհանուր առմամբ, վերջին տարիների ընթացքում ՀՀ դատավարական օրենսդրության զարգացման համար որպես ուղենիշ են ծառայում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ շրջակա միջավայրի պահպանության հարցերով դատական պրակտիկայի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում գնահատելու օրենսդրության վերոգրյալ դրույթների արդյունավետությունը մարդու կամ հասարկության էկոլոգիական իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Կետ 5. Վարչական և դատական ընթացակարգերի մատչելիության, համապատասխան մեխանիզմների մասին տեղեկատվություն տրամադրվում է իրավական ակտերի հրապարակման և համապատասխան պետական մարմինների կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից ուղեցույցների և բրոշյուրների ստեղծման և տարածման միջոցով (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք):

ՀՀ-ում ստեղծվել և գործում են www.court.am և www.datalex.am ինտերնետային կայքերը, որտեղից կարելի է ստանալ ՀՀ դատական համակարգի բոլոր ատյանների կայացրած դատական ակտերը:

Հանրապետությունում գործում են իրավաբանական ծառայություններ մատուցող գրասենյակներ, որոնք նույնպես տարածում են տեղեկատվությունը դատական ընթացակարգերի կիրառման վերաբերյալ:

Միայն 2013 թվականին ՀՀ-ում անցկացվել են երեք և ավելի մամլո ասուլիսներ, որոնց ընթացքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկվել է հասարակական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց շրջակա միջավայրի պահպանության հարցերով արդարադատության մատչելիության խոչընդոտները (http://www.youtube.com/watch?v=pCObK-NLDXs):

Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը նախատեսում է նաև անցկացնելու շրջակա միջավայրի հարցերով ՀԿ-ների և քաղաքացիների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ ազգային աշխատանքային հանդիպում՝ ստեղծված իրավիճակի վերաբերյալ լուծման ուղիների մշակման նպատակով:

XXIX. 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 9-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրացման ընթացքում:

Պատասխան՝

Այս բնագավառում երկու հիմնական խնդիրներն են դատարանների անկախության և արդարադատության համակարգի հանդեպ վստահության ոչ պատշաճ մակարդակը: Երկու խնդիրներն էլ հաղթահարելու արդյունավետ միջոցներ են շրջակա միջավայրի պահպանության ոլորտում դատավորների գիտելիքների մակարդակի բարձրացումը, դատապաշտպան-էկոլոգների առկայությունը, համակարգված և մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանության տեսանկյունից հիմնավորված օրենսդրության ձևավորումը:

Դեռևս լուծման անհրաժեշտություն ունեն նաև դատավարական իրավասուբյեկտության առնչությամբ առկա խնդիրները, քանի որ ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի մոտեցումները որոշակիորեն հակասում են միմյանց:

Չնայած իրականացված քայլերին, դատավորների տեղեկացվածության մակարդակը բնապահպանական խնդիրների և օրենսդրության, այդ թվում նաև օրհուսի կոնվենցիայի և այլ իջազգային կոնվենցիաների վերաբերյալ շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: Դատավորների անկախության հետ կապված խնդիրները հարուցում են խոչընդոտներ շրջակա միջավայրի պահպանության հարցերի առնչությամբ արդարադատություն իրականացման ճանապարհին:

Գործնական մակարդակով գոյություն ունեն մի քանի խոչընդոտներ՝

Իրավական խոչընդոտներ

- Ձևավորված դատական պարկտիկա, որը, ըստ էության, բացառում է հասարակական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքը: կարող է խնդիր առաջանալ ազգային օրենսդրությունում Կոնվենցիայի հղումների հետ կապված: Ազգային օրենսդրությունում

անհրաժեշտ դրույթը կամ բացակայում է, կամ թերի է,

- դատական ծախսերը:

Ոչ իրավական խոչընդոտներ

- սոցիալական գործոնը.սոցիալ-տնտեսական զարգացման գործոնը հաճախ գերազանցում է շրջակա բնական միջավայրի պահպանման համար անհանգստությունը,
- որակյալ իրավաբան-էկոլոգների պակասը,
- հասարակության անիրազեկությունը կամ ոչ բավարար իրազեկությունն էկոլոգիական օրենսդրության դրույթների մասին,
- քաղաքացիների էկոլոգիական իրավունքների իրավական պաշտպանության հնարավորությունների (դատական պաշտպանության հնարավորությունը, դիմումներ դատախազությանը, բողոքներ վարչական կարգով, բողոք օմբուդսմենին) մասին անիրազեկությունը,
- դատավորների՝ էկոլոգիական իրավական ակտերի և միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ ՕԿ-ի մասին իրազեկության ոչ բավարար մակարդակը:

Ֆինանսական խոչընդոտների վերացման կամ կրճատման համար օգնության տրամադրման գլխավոր մեխանիզմը պետական տուրքի արտոնություններն են հանդիսանում, որոնք են՝

- ազատում պետական տուրքի վճարումից ընդհանուր էկոլոգիական շահերը պաշտպանելու դեպքերում,
- պետական տուրքի նվազեցում,
- պետական տուրքի դրույքի նվազեցում,
- պետական տուրքի վճարման տարաժամկետում և այլն:

XXX. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տրամադրեք լրացուցիչ տեղեկատվություն արդարադատության մատչելիության վերաբերյալ 9-րդ հոդվածի դրույթների իրացման վերաբերյալ, օրինակ՝ գոյություն ունեն արդյոք վիճակագրական տվյալներ շրջակա միջավայրին առնչվող հարցերով արդարադատության վերաբերյալ կամ կան արդյոք արդարադատության մատչելիությանը խոչընդոտող ֆինանսական կամ այլ արգելքների վերացման կամ կրճատման համար աջակցության մեխանիզմներ:

Պատասխան՝

Հնարավոր է դատական ծախսերից ազատման կամ դրանց կրճատման մասին որոշումների ընդունում դատարանի կողմից՝ կախված կողմերի նյութական վիճակից:

XXXI. 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:
www.justice.am, www.gov.am, www.court.am, www.concourt.am:

10-22 հոդվածներն կոնվենցիայի իրականացմանը չեն վերաբերում: Կոնվենցիայի նպատակի առնչությամբ ընդհանուր դիտողություններ՝

XXXII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նշեք, եթե տեղին է, թե ինչ կերպ է Կոնվենցիայի իրագործումը նպաստում ներկա և ապագա սերունդների յուրաքանչյուր անձի՝ իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանը:
Պատասխան՝ Օրհուսի Կոնվենցիայի դրույթները նպաստում են շրջակա միջավայրի քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման ավելի արդյունավետ, թափանցիկ և վերահսկվող գործընթացի ստեղծմանը և իրագործմանը հասարակության ավելի լայն և արդյունավետ մասնակցության շնորհիվ: Պետական մարմինները կարող են հենվել ՕԿ-ի դրույթների վրա նաև ի պաշտպանություն իրենց նախաձեռնությունների, ի շահ իրենց օգտվել հասարակության գիտելիքներից և փորձից: Դրանով իսկ Օրհուսի Կոնվենցիան ամրապնդում է շրջակա միջավայրի պահպանության համար պատասխանատու պետական մարմինների դիրքերը և հասարակության աջակցության շնորհիվ ապահովում է շրջակա միջավայրի գործոնը հաշվի առնելը, պետական մարմինների և տարբեր շահագրգիռ կողմերի միջև համագործակցության հարաբերությունների ձևավորումը:

XXXIII. ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6bis ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 1bis ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Կապված օրենսդրական և կարգավորող այլ միջոցների հետ, որոնք ուղղված են 6bis հոդվածի իրականացումն ապահովելու հասարակայնության մասնակցությունը գենետիկորեն փոփոխված օրգանիզմները շրջակա միջավայր և շուկա դիտավորյալ բացթողնման վերաբերյալ որոշումների կայացմանը՝ ներկայացրեք. ա) Կապված 6bis հոդվածի 1-ին կետի և. (i) 1bis հավելվածի **1-ին կետի** հետ՝ Կողմի իրավական

կարգավորման շրջանակներում ձեռնարկված քայլերը ապահովելու համար 6bis հոդվածի դրույթներին համապատասխան արդյունավետ ծանուցումը և հասարակայնության մասնակցությունը,

(ii) 1bis հավելվածի **2-րդ կետի** հետ՝ Կողմի իրավական կարգավորման շրջանակներում 1bis հավելվածով սահմանված հասրակայնության մասնակցության ընթացակարգին առնչվող ցանկացած բացառության և դրա չափանիշների մասին,

(iii) 1bis հավելվածի **3-րդ կետի** հետ՝ ձեռնարկված միջոցները հասարակայնությանը պատշաճ ձևով, ժամանակին և արդյունավետ կերպով մատչելի դարձնելու դիտավորյալ շրջակա միջավայր կամ շուկա բացթողնման համար թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտի էությունը, ինչպես նաև գնահատման վերաբերյալ եզրակացությունը, եթե հնարավոր է։

(iv) 1bis հավելվածի **4-րդ կետի** հետ՝ ձեռնարկված միջոցներն ապահովելու համար, որպեսզի սույն կետում նշված տեղեկատվությունը որևէ դեպքում գաղտնի չլինի։

(v) 1bis հավելվածի **5-րդ կետի** հետ՝ ձեռնարկված միջոցներն ապահովելու համար որոշումների կայացման ընթացակարգերի թափանցիկությունը և հասարակայնության համար համապատասխան ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը, ներառյալ օրինակ՝

ա. Հնարավոր որոշումների բնույթը,

բ. Որոշում ընդունելու համար պատասխանատու պետական մարմինը,

գ. 1bis հավելվածի համաձայն սահմանված հասարակայնության մասնակցության կազմակերպումը,

դ. Պետական մարմնի հիշատակումը, որից կարելի է ստանալ համապատասխան տեղեկատվություն,

ե. Պետական մարմնի հիշատակումը, որին կարող են ուղղվել մեկնաբանությունները, ինչպես նաև դրանք ներկայացնելու ժամանակացույցը,

(vi) 1bis հավելվածի **6-րդ կետի** հետ՝ ձեռնարկված միջոցները ապահովելու համար, որպեսզի 1bis հավելվածի 1-ին կետի իրականացմանն ուղղված քայլերը թույլ տան

հասարակայնությանը որևէ ընդունելի տարբերակով ներկայացնելու ցանկացած մեկնաբանություն, տեղեկատվություն, վերլուծություն կամ կարծիք, որոնք առնչվող կհամարեն նախատեսվող դիտավորյալ բացթողնմանը կամ շուկայում տարածմանը,

(vii) 1bis հավելվածի **7-րդ կետի** հետ՝ ձեռնարկված միջոցները ապահովելու համար, որպեսզի 1bis հավելվածի 1-ին կետին համապատասխան կազմակերպված հասարակայնության մասնակցության արդյունքները հաշվի առնվեն,

(viii) 1bis հավելվածի **8-րդ կետի** հետ՝ ձեռնարկվաշ միջոցները ապահովելու համար, որպեսզի պետական մարմինների կողմից ընդունված որոշումների տեքստերը, որոնք հանդիսանում են 1bis հավելվածի դրույթների կարգավորման առարկա, ինչպես նաև դրանց պատճառաբանությունը և հիմնավորումը մատչելի լինեն հասարակայնության համար,

բ) 6bis հոդվածի **2-րդ կետի** մասով՝ որքանով են 1bis հավելվածի դրույթների պահանջները համապատասխանում և ապահովվում Կողմի ազգային կենսաանվտանգության շրջանակի կողմից և որքանով են համատեղելի Կենսաբազմազանության մասին Կոնվենցիայի Կարթագենյան Արձանագրության նպատակներին:

Պատասխան՝

ՀՀ-ն դեռևս չի վավերացրել Օրհուսի կոնվենցիայի Ալմաթայի ուղղումը: ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության գոյությայն մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը մասամբ արտացոլում է Օրհուսի կոնվենցիայի Ալմաթայի ուղղման և Կարթագենյան արձանագրության դրույթները:

XXXIV. 6bis ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 1bis ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Ներկայացրեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 6bis հոդվածի և 1bis հավելվածի յուրաքանչյուր դրույթի իրացման ընթացքում:

Պատասխան՝

XXXV. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 6bis ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 1bis ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն գենետիկորեն փոփոխված օրգանիզմների շրջակա միջավայր դիտավորյալ բացթողնման և շուկայում տարածման վերաբերյալ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության վերաբերյալ 6bis հոդվածի իրացման վերաբերյալ, օրինակ՝

կան արդյոք վիճակագրական տվյալներ կամ այլ մատչելի տեղեկատվություն նման որոշումների կայացման գործընթացին հասարակայնության մասնակցության վերաբերյալ կամ 1bis հավելվածի 2-րդ կետով նախատեսված որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության բացառությունների մասին:
Պատասխան՝
XXXVI. 6bis ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ Թվարկեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան, ներառյալ այն կայքերը, որոնք տեղեկատվություն են պարունակում գենետիկորեն փոփոխված օրգանիզմների վերաբերյալ որոշումների և բացթողումների գրանցման վերաբերյալ:
Պատասխան՝

XXXVII. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե Համապատասխանության հարցերով Կոմիտեի առաջարկներից որևէ մեկի վերաբերյալ ներկայացված հաշվետվության քննարկման արդյունքում Կողմերի Հանդիպումը իր վերջին նստաշրջանում միջոցառումներ նախատեսել ձեր երկրի համապատասխանության առնչությամբ, խնդրում ենք նշել՝ ա) ինչպիսի միջոցներ են դրանք եղել, և բ) ինչ հատուկ միջոցներ է ձեռնարկել ձեր երկիրը իրականացնելու այդ միջոցները Կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունն ապահովելու համար: Խնդրում ենք ըստ անհրաժեշտության կատարել հղումներ Զեկույցի համապատասխան բաժիններին:
Պատասխան՝